Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք!

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Հ. Հ. Դիվիզիայի Քաղ-բաժնի խմբագրա-հրատարակչական մասի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԴԱՍԸՆԹԱՑՔ

3(075)
Ք-16

Տպարան Հ. Հ. Դիվիզիայի Քաղ-բաժնի
Ղարաքիլիսա
1922

3 (575)
Ք-16
46

25 SEP 2006
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
21 DEC 2009

ՄԵՐ ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՎ

Կարմիր բանակի քաղաքական դաստիարակման գործը նույնքան կարևոր է, որքան նրա ռազմապես դաստիարակված լինելը։

Կարմիր բանակը ռազմապես ավելի դաստիարակված պետք է լինի, քան իմպերիալիստական աշխարհի սպիտակ բանակը։ Առավել ևս կարմիր բանակը քաղաքականապես շատ ավելի դաստիարակված պետք է լինի, քան այդ նույն իմպերիալիստական աշխարհի սպիտակ բանակը։

Ասենք իմպերիալիստական երկրների սպիտակ բանակը քաղաքականապես վոչ մի պատրաստություն չունի, որպեսզի կարելի լիներ նրան համեմատել կարմիր բանակի հետ այդ ուղղությամբ։

Եթե սպիտակ բանակը ունենար քաղաքական դաստիարակություն, այլ կերպ ասած, եթե այդ բանակի զինվորները պարզ գաղափար ունենային իրենց շուրջը կատարվող երևույթների մասին, դա մեծ դժբախտություն կլիներ բուրժվական վողջ հասարակարգի համար։ Այդ դեպքում նրանք (սպիտակ բանակի զինվորները) կտեսնեին, որ իրենք կույր գործիք են մի խումբ բուրժվանների ձեռքին և այն բոլոր արիւնհեղությունները, որոնք կատարվում են պատերազմի ընթացքում, նպատակ ունեն այդ նույն կապիտալիստների դրպանը լիքը պահելու։

Այդ է պատճառը, որ բուրժվական բոլոր կառավարությունները աշխատում են իրենց զորքը հեռու պահել քաղաքա-լուսավորչական աշխատանքից։

«Զինվորը քաղաքականությամբ չպետք է զբաղվի»,—ահա բուրժվական զինապետների հիմնական լոզունգը։

Եթե զինվորը քաղաքականությամբ զբաղվի,—ասում են նրանք,—նրա մեջ այլևս դիսցիպլինա մտցնել անհնար է, նրա ռազմունակությունը կպակասի։

Եվ իսկապես այդ այդպես է։

Փորձեցեք սպիտակ բանակի զինվորին տալ պարզ հասկացողություն քաղաքական խնդիրների մասին և այդ դեպքում նա այլևս զինվոր չի լինի, իր կրավորական դիրքից դուրս կգա և

29 AUG 2013

կ'կազմալուծի սպիտակ բանակը։ Եթե բուրժվական բանակի ազատ զինվորը իրան հարց տա, թե ինչի համար է ինքը ծառայում և ինչ նպատակի են ուղղված իր միջոցով մղված կռիվները, այդ դեպքում նա իր այդ հարցերին պիտի պատասխանեն նստանա, որ ինքը ծառայում է վոչ թե իր «հայրենիքին» իր ժողովրդի շահերին, այլ սեփական բուրժվազիային և նրա գրպանի պաշտպանութեան։

Իսկ երբ զինվորը այդ բոլորը իմացավ, բուրժվազիայի բանը պրծած է։

Ահա թե ինչու բուրժվական բանակի ղեկավարները ամեն կերպ աշխատում են, որ զինվորի կազմրմանումը լրագիրը մուտք չունենա և զինվորը ամբողջապես հեռու մնա քաղաքական խնդիրներով զբաղվելուց և այդ խնդիրները քննութեան առնելուց։

Սակայն բոլորովին այլ կերպ է խնդիրը կարմիր բանակում։

„Առանց քաղաքական - լուսավորչական աշխատանքների, կարմիր բանակում դիտակից դիսցիպլինա հաստատել չի կարելի, նվիրված կարմիր զինվորներ ունենալ չի կարելի և ընդհանրապես կարմիր բանակ կազմակերպել չի կարելի“,—ահա այս և խորհրդային իշխանութեան հիմնական լոզունգը։

Ինչքան վոր շատ հասկացողութիւն ունենա կարմիր զինվորը քաղաքական խնդիրների մասին, ինչքան նա լավ ըմբռնի իր շուրջը կատարվող երևույթները, այնքան նա նվիրված կլինի իր ստեղծած սոցիալիստական հայրենիքին, այնքան պարզորոշ նա կըբռնի իր վրա դրված պարտականութիւնների ծանրութիւնն ու վեհութիւնը և կաշխատի պատվով կատարել այդ պարտականութիւնները։

Նա կհասկանա, որ ինքը աշխարհի վերջին բանակի զինվորն է, վորը կոչում ունի վերացնելու ընդհանրապես բոլոր բանակները. նա կհասկանա, որ ինքը կոչված է կռվի միջոցով վերջ տալ բոլոր կռիվներին ու շահագործման և վերջապես նա կհասկանա, որ իրանից են սպասում միլիոնավոր ճնշվածները իրենց վերջնական ազատագրումը։

Քաղաքական դաստիարակությունը եվ լուսավորությունը ապագա բանակի համար կարևորություն են բերում, իսկ կարմիր բանակին՝ ազորություն եվ անվեհերություն։

Այս տարրական ճշմարտութիւնը շատ լավ է ըմբռնել խորհրդային իշխանութիւնը և նրա մեծագույն հոգսերից մեկը կարմիր բանակի քաղաքական դաստիարակման խնդիրն է։

Մեր հայկական կարմիր բանակին քաղաքականապես դաստիարակելու գործը դրված է հայկական դիվիզիայի քաղբաժնի վրա։

Եվ պետք է խոստովանել, որ ծանր ու պատասխանատու գործ է մեր բանակի քաղաքական դաստիարակման գործը։

Զափազանց քիչ են պատրաստված և գործին տեղեակ քաղաքական աշխատողներ, գիւղից եկած նորակոչ զինվորների 90 տոկոսը այբբենական անգրագիտութիւնից ազատ չէ, չկա հայերեն գրականութիւն, չկան դասագրքեր, գրենական պիտույքներ եայլն։

Եվ քաղաքական բաժինը ստիպված է իր աշխատանքները տանելիս կռվել այս բոլոր դժվարութիւնների դեմ։

Ամենից առաջ պետք է այբբենական անգրագիտութիւնը վերացվի կարմիր բանակի շարքերից, վորպեսզի հնարավոր լինի վերացնելու քաղաքական անգրագիտութիւնը։ Այդ ուղղութեամբ տարված աշխատանքները արդեն տվել են իրենց բավարար արդիւնքները։

Այժմ մեր կարմիր բանակում ունենք բավարար չափով գրագետ զինվորներ, վորոնք կարող են ազատ գրել կարդալ և իրենց կարդացածը հասկանալ։ Ահա այդ կարմիր զինվորներին պետք է դարձնել նաև քաղաքականապես գրագետ։ Այս ուղղութեամբ նույնպես ուժեղ աշխատանք է տարվում, բայց այդ աշխատանքներն էլ վորոշ և լուրջ խոչընդոտների են հանդիպում։

Այդ խոչընդոտներից ամենակարևորը հայերեն ձեռնարկների բացակայութիւնն է։

Մենք արդեն ասինք, որ բանակում չունենք պատրաստված ընկերների բավականաչափ քանակ։ Եղածներից շատերը դեռ անփորձ են և անպատրաստ։ Շատերը ռուսաց լեզվին չեն տիրապետում, այդ պատճառով ռուսական հարուստ գրականութիւնը անմատչելի է մնում այդպիսիների համար։ Իսկ բանակի քաղաքական դաստիարակման գործը չի սպասում։ Անհրաժեշտ է շտապ և անմիջական միջոցներ ձեռք առնել։

Քաղբաժնի պետ ընկ. Հովսեփեանի կարգադրութեամբ, մի խումբ ընկերների հանձնարարվեց ամենաշտապ կերպով կազմել ներկա «Քաղաքական ուսմունքի համառոտ դասընթացքը», վորը նպատակ ունի եղած կարիքի գեթ ամենանվազագույն մասը բավարարելու։

Հրատարակելով այս գրքույկը, Քաղբաժինը նպատակ է ունեցել տալու մեր քաղղեկների և կարմիր բանակի ուսուցիչների ձեռքը մի օժանդակ ձեռնարկ, վորը անկասկած է, կթեթևացնի և կհեշտացնի նրանց աշխատանքը։

Գրքույկը կարող է տրվել նաև կարմիր բանակայինների ձեռքը վորպես դասագիրք։

Մեր բաժանած գլուխները դասախոսի համար պարտադիր չի կարող լինել։ Դասախոսը կարող է 3-4 դասում անցնել այն, ինչ վոր մենք մի դասի մեջ ենք տեղավորել։

Մենք սկզբից խոստովանում ենք, վոր մեր գրքույկը ունի բավական խոշոր պակասություններ։ Նրա առաջին գլուխները կազմված են պետքից եղած շատ ավելի համառոտ և անկատար։ Բացի այդ մենք զգացել ենք, վոր իր մեջ այսքան ընդարձակ-շրջան պարփակող նիւթը չափազանց պակասավոր և թերի կլինի, եթե պարփակվի 42 երեսանոց մի բրոշիւրի մեջ, երբ այդ բրոշիւրը գրված է չափազանց շտապ, վորի պատճառով կազմողները ավելի լուրջ ու երկար մտածելու և ավելի կանոնավոր աղբիւրներից օգտվելու հնարավորություններից զրկված են եղել։

Այսպես թե այնպես մենք հույս ունենք, վոր մեր ներկա հրատարակությունը իր նպատակին կհասնի, նա իր օգնությունը կմատուցի սովորելցանկացող մեր քաղաքացիներին և դրագետ կարմիր զինվորներին։

Վ. Ռոմեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ

ՀԱՄԱՌՈՏ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա. ԴԱՍ

Երկրի ձևն ու մեծությունը

ա) Երկիրն ունի կլոր ձև, նրա կլոր լինելը ապացուցվում է հետևյալ փաստերով։ Օրինակ՝ մի մարդ եթե դուրս գա իր ապրած քաղաքից և ամբողջ ժամանակ գնա մի ուղղությամբ, ասենք դեպի Արևելք, նա վորոշ ժամանակից հետո ելի կ՝վերադառնա իր քաղաքը, բայց արդեն Արևմտեան կողմից։ Երկրորդ օրինակ՝ երբ արևը ծագում է, ամենից առաջ արևի ցոլքերը ընկնում են ամենաբարձր սարերի գագաթներին, ապա լանջերին, ապա ընկնում են սարի ստորոտը և դաշտը. մինչդեռ եթե երկիրը տափարակ լիներ սեղանի պես, արևը դուրս գալիս պիտի միանգամից լուսավորեր և սար և դաշտ։ (Կարելի է օրինակ վերցնել սեղանը, մոմը վառել և սեղանի տակից բարձրացնելով միանգամից լուսավորել ամբողջ սեղանի մակարդակը, վորը հակառակ ապացույցն է արևի լուսավորելուն)։ Երրորդ օրինակ՝ արևի մայր մտնելը. առաջ արևի շողերը կարվում են դաշտից և ապա սարերից ու ամպերից, վորից հետո երկրին պատում է խավարը։ Չորրորդ օրինակ՝ երբ նավը հեռանում է ափից, նախ անհետանում է նավի ցածր մասը, ապա միջին մասը և վերջում նավի կայմը կամ կատարը, մինչդեռ եթե ծովը ունենար հարթ մակարդակ, նավը եզրից հեռանալիս պիտի աստիճանաբար փոքրանար և ապա իր փոքրությեան պատճառով անտեսանելի դառնար, ինչպես թռչունները օդի մեջ շատ բարձրանալով մեր աչքից կորչում են, բայց վոչ մաս-մաս անհետանում։ Հինգերորդ օրինակ՝ արևի խավարումը, երբ երկրի ստվերը ընկնում է արևի վրա, արևը ծածկվում է կլոր ստվերով։

Երկրի մեծությունն ել մեզ հայտնի է։ Շատ հեշտ բան է մեզ համար իմանալ մի կլոր խնձորի մեծությունը. կարելի է ծանր ու թեթև անել, կարելի է նրա տրամագիծը կամ շրջագիծը չափել։ Մի խնձորի տրամագիծը չափելու համար հարկավոր է ունենալ մի վերշոկանոց կամ երկու վերշոկանոց

մեխ, վորը անցկացնելով խնձորի մի կողմից միւսը, կիմանանք քանի վերստ տրամագիծ ունի։ Երկիրը շատ մեծ լինելով, հարկավոր է 12,000 վերստանոց մի մեխ անցկացնել, վոր երկրի մի ծայրից անցնի միւսը։ Երկրի շրջագիծը երեք անգամ մեծ է տրամագծից, այսինքն 36,000 վերստ է։ Ահա թե ինչքան մեծ է մեր երկիրը։ Սարերն ու ձորերը շատ չնչին խորթ ու բորդ կարող են համարվել երկրի վրա. ինչպես խնձորի վրա մի ուժեղը կամ փոսիկը։

բ) Մթնոլորտ։ Մթնոլորտը երկիրը շրջապատող օդն է. նրա բարձրութիւնը մեր երկրից դեպի վերև՝ հաշվում է 200 վերստ։ Օդը դեպի երկիրը նստած է խիտ-դալին շերտով, վոր բավարարում է մարդկանց, կենդանիներին և բույսերին շնչելու ու ապրելու. իսկ վերևի շերտերում օդը նոսր է և ցանցառ. եթե տասը վերստից ավել մարդիկ բարձրանան այերոպլանով. այն տեղ այլևս ապրել չեն կարող օդի պակասութեան, քչութեան պատճառով։ Մինչդեռ եթե վերևում էլ օդ լիներ այնքան, ինչքան երկրի մոտ է, մարդիկ կարող էին բարձրանալ շատ բարձր։

գ) Երկրի կեղեվն ու միջուկը։ Մեր երկիրը շատ ու շատ առաջ եղել է արևի պես շիկացած, հրային դրութեան մեջ։ Կամաց-կամաց դրսից սառչելով, դրսի կողմում առաջ է եկել կեղև, կաշի, և մինչև հիմա դեռ մեր երկրի միջուկը հրային դրութեան մեջ է։ Բացի այդ, կեղևի վրա առաջ եկած զանազան կենդանիներ ու բույսեր ժեռել և հաստացրել են երկրի երեսի շերտը։

Երկրագնդի սառչելուց՝ կոշտ մարմիններից կազմվել է ցամաքը, իսկ ջրային մասը, բաժանվելով նրանից, առաջ է բերել ծովերը։ Երկրի միջուկը դեռ հրային դրութեան մեջ է. այդ ապացուցվում է հետևեալ փաստերով։ Մարդիկ մինչև հիմա կարողացել են երկրի ներսը մտնել միայն երկու վերստ (հանքերում)։ Եթե երկրի վրա օդի տաքութիւնը հասնում է 13 աստիճանի, շախտաներում հասնում է 30 աստիճանի։ Իսկ այդ նշանակում է, վոր եթե ելի հնարավորութիւն ունենանք խորանալ, այնպիսի տաքութեան կհասնենք, վորտեղ շնչել անկարելի է, անգամ կարելի է այրվել։ Բացի այդ դրա ապացոյցն են հրաբուխները, վոր հեղուկային վիճակում ժայթքում են լեռներից. պարզ է վոր եթե երկրի խորքը հալած վիճակի մեջ չլիներ՝ հրաբուխներն էլ չեին լինի։ Երկրի կեղևի հաստութիւնը հաշվում է 50 վերստ։

ե) Սարերի գոյանալը։ Լեռների ինչ լինելը բացատրելիս, պիտի ընդգծել, վոր նրանք վոչ այլ ինչ են, եթե վոչ երկրի մակերևույթի ծալքեր. սրանք առաջ են եկել երկրի (հրային դրութիւնից) սառչելուց և կծկվելուց։

Բացի այդ՝ լեռները առաջ են եկել և կարող են առաջ գալ հրաբուխների ժայթքումներից և երկրաշարժերից։

զ) Հրաբուխ։ Մենք ասացինք, վոր երկրի միջուկը հրային դրութեան մեջ է։ Այդ միջուկը երբեմն առաջ է բերում ժայթքում այս կամ այն հրաբուխային սարի միջոցով, վորը դուրս ժայթքելով հրաբուխային բերաններից, լավայի վիճակով թափվում է շուրջը և ծածկում այդ լավայով գիւղեր, քաղաքներ։ Այդպես եր Հայաստանում Ակռի կործանումը 1840 թվականին։ Կան և միշտ գործող, չհանգչող հրաբուխներ. օրինակ՝ Վեզուվը՝ Իտալիայում։

ՉՐԴԱՍ

Տիեզերքի ծագման մասին

Շատ և շատ հազար դարեր առաջ, գոյութիւն չեն ունեցել վոչ երկիր, վոչ երկինք, վոչ ծովեր, վոչ արև և վոչ աստղեր։ Այս բոլորը եղել է խառնված, գազային վիճակում, և այդ տեսակ տիեզերքի վիճակը կոչվել է գազային զանգված։ Այդ գազային զանգվածի մեջ (ըստ գիտնականներ Կանտի և Լապլասի) վորոշ մասեր, վորոնք ունեցել են իրենց մեջ կենտրոնաձիգ ուժ, ձգելով դեպի իրենց վորոշ տարածութեամբ գազեր, բաժանվել են ընդհանուր զանգվածից և առաջ են բերել նորանոր զանգվածներ տիեզերքի մեջ, այդպիսով գրավել են առանձին-առանձին տարածութիւններ։ Այդ առանձին զանգվածները, ունենալով իրենց մեջ ձգողական ուժ, առաջ են բերել շարժումներ, նախ իրենց շուրջը պտտվելով և ապա պտտվելով իրենցից մեծ զանգվածների կամ մարմինների շուրջը։ Այդ շրջանում մարմինների առաջ գալը համարվում է տիեզերքի ծագում։

Այն բոլորը ինչ մենք տեսնում ենք երկրի վրա և երկնակամարում, միասին վերցրած, կոչվում է տիեզերք։

Երկիր կոչվում է այն գունդը, վորի վրա մենք ապրում ենք, իսկ վորտեղ գտնվում են արևը, լուսինը և աստղերը՝ կոչվում է երկինք կամ երկնակամար։ Իսկապես երկնակամար գոյութիւն չունի, այդ միայն մեզ թվում է, թե մի բան, մի մեծ խալիչա փռված է մեր երկրի վրա, վորպես մի տանիք և անուանը դրել ենք երկինք, մինչդեռ նա մի անհուն տարածութիւն է, անվերջ և անծայր. վորքան մենք մոտենանք նրան՝ նա կհեռանա մեզնից։

Աստղեր, լուսին, արև։ Այս բոլոր մարմինները վոչ դուրս են գալիս և վոչ մայր մտնում։ Միայն մեր երկիրն է

դառնում իւր առանցքի շուրջը 24 ժամվա մէջ, վորից առաջ է գալիս ցերեկ և գիշեր։ Երբ մեզ մոտ ցերեկ է, Ամերիկայում գիշեր է. իսկ երբ Ամերիկայում գիշեր է, մեզ մոտ ցերեկ է լինում։ Նշանակում է երկիրն իւր երեսը շարունակ դարձնում է արևի առաջ։ Արևը, լուսինը, աստղերը իրենց հերթին պտտվում են իրենց առանցքի և իրենցից մեծ տիեզերական մարմինների շուրջը։ (Կարելի է ապացուցել հասարակ փորձերով)։ Երկիրը բացի իւր առանցքի շուրջը պտտվելը, 365 օրում պտտվում է արևի շուրջը, վորից առաջ են գալիս տարվա չորս եղանակները։ Արևը մեր երկրից մեծ է մեկ միլիոն ու կես անգամ և հեռու է մեր երկրից 130 միլիոն վերստ, բայց փոքր է երևում իւր հեռավորութեան պատճառով։ Կան արևից մեծ աստղեր, վորոնք հեռու գտնվելու պատճառով նրանց տարութիւնը մեզ չի հասնում։ Արևի մեծութիւնը եթե համեմատենք 11 վեղրո ցորենի հետ, մեր երկիրը այդ 11 վեղրոյի մի հատիկին է հավասար։ Լուսինը և ուրիշ մի շարք աստղեր խավար մարմիններ են, նրանք լույսը ստանում են արևից։ Գիշեր ժամանակ լուսնից և աստղերից այդ լույսը անդրադառնում է երկրին, վորով և լուսավորում է նրան։ Երկիրը 50 անգամ մեծ է լուսնից։

Կլիմա։ Ասացինք, վոր մեր երկիրը, բացի իւր առանցքի շուրջը պտտվելը, 365 օրում կամ մի տարում պտտվում է արևի շուրջը։ Ամառվա եղանակին արևը մեզ նայում է մեր գագաթից, ճառագայթները ընկնում են մեզ վրա ուղղահայաց, վորի պատճառով մեր երկրում լինում է շոգ. ձմեռը ճառագայթները ընկնում են թեք, դրա համար ցուրտ է, իսկ գարնանը և աշնանը կիսաթեք, վոր լինում է բարեխառն (վոչ ցուրտ և վոչ տաք)։

3-Ր Դ Դ Ա Ս

Շատ տարիներ առաջ, քան ստեղծվել է բուսական և կենդանական կեանքը, մեր երկրագունդը եղել է գազային-հեղուկային մի հսկայական մարմին։ Այդ նրա նախակեանքի շրջանն եր. դա հրային-հեղուկային մի գունդ եր, ճիշտ նման այժմեան մեր արեգակին։ Անհաշվելի միլիոն տարիների ընթացքում նա կամաց կամաց սառել է։ Ավելի հեղուկային տարրերը անջատվել են իրանց մեջ գոյացող պինդ մասերից։ Գոյանում են երկրիս ջրային և ցամաքային մասերը։ Ջրային մասերը կենտրոնանում, մեծ ովկեանոսների ու ծովերի կերպարանք են ստանում։ Պինդ, արդեն ցամաք դարձած մասերը ջրերից բարձրանում կեղև են դառնում։ Այս շրջանում է, վոր առաջին անգամ ովկեանոսի խորքերում կարելի է նկատել կենդանի մարմիններ (լորձանիթեր)։

Անցնում են նորից միլիոնավոր տարիներ։ Երկիրը ձևավորվում է, փոխվում նրա կերպարանքը, սկսվում է մի նոր շրջան, երբ առաջ են գալիս հարթութիւններ ու բարձրութիւններ։ Հաճախ կրկնվող երկրաշարժները, քամին, անձրևը և գետերը հետզհետե փոփոխում են երկրի կերպարանքը, ստեղծելով լեռներ և լեռնաշղթաներ։ Ովկեանոսի խորքում ապրող անթիվ կենդանի մարմիններից վոմանք համակերպվում է զարգանում են, միւսները վոչնչանում։ Այնտեղ, ուր ավելի շատ հարմարութիւններ են գտնում, նրանք զարգանալով ապագա օրգանական-կենդանական աշխարհի հիմքն են կազմում։

Ժամանակի ընթացքում ձևավորվում են նաև երկրագնդի կլիմայական գոտիները։ Հարավային և հիւսիսային բևեռները տարբերվում են հասարակածայինից։ Դրանով նախկին զարգացող կենդանիների ապրելու կամ վոչնչացման մի պատճառ էլ է ավելանում։ Այնտեղ, վորտեղ բարենպաստ են կլիմայական գոտիները, կենդանական ու բուսական աշխարհի զարգացումը գնում է իր ուղիով, իսկ վորտեղ անբարեհաջող է լինում, նրանք կամ այլանդակվում ու վոչնչանում են և կամ հարմարվելով բնութեանը՝ կերպարանափոխվում են։

4 Ր Դ Դ Ա Ս

Բույսերի եվ կենդանիների առաջանալը.—կենդանական և բուսական կեանքի նախահայրերը եղել են նախնական լորձանիթից կազմված միաբջիջ մարմինները։ Սրանցից ապագայում կազմվել է թե բուսական և թե կենդանական աշխարհը։

Սկզբնական մարմինները երևան են գալիս առաջին անգամ ջրերում։ Նրանց տեսակները անչափ շատ ու զանազան են եղել։ Այս մարմինների մի մասը ընկնելով ցամաք և հարմարվելով ցամաքի պայմաններին, հիմք են դնում բուսական աշխարհին։ Մթնոլորտը այդ ժամանակ լիքն եր ածխաթթվուտ կոչված գազով և շատ քիչ քանակութեամբ թթվածնով։

Այս հանգամանքը թույլ չեր տալիս ցամաքի վրա կենդանական կեանքի զարգացմանը, այլ ընդհակառակը նպաստում եր բուսական կեանքի զարգացմանը։ Ուստի սկսում է հարստանալ բուսական կեանքը ցամաքի վրա։ Առաջ են գալիս խիտ ու փարթամ անտառներ։

Այդ սկզբնական անտառները նման չեին ներկա անտառներին. նրանք տարբերվում եին իրենց փարթամութեամբ և ծառերի սոսկալի մեծութեամբ։ Երկրագնդի վրա տեղի ունեցած մեծ երկրաշարժներից այդ անտառների մի մասը մնացել է գետնի տակ, վորով և գոյացել են քարածուխի հանքերը։ Այդ հանքե-

բում գտնվում են քարածուխ դարձած ծառերի բներ, վորոնց հաստությունը հասնում է մի քանի տասնհակ սաժենների։

Այդ նույն ձևով գոյացել է նավթը կենդանիների մարմիններից։ Այդ կենդանիների զարգացման մասին խոսք կլինի մի քիչ ներքև։ Այդ կենդանիները նույնպես զանազան երկրաշարժներից ճնալով գետնի տակ ու ենթարկվելով փոփոխությունների, առաջ են բերել երկրագնդի զանազան շերտերում նավթ կոչված հեղուկը։

Բնագիտության մեջ հայտնի է, վոր կենդանիները շնչելիս օդից վերցնում են թթվածին և բաց թողնում ածխաթթվուտ գազը. իսկ բույսերը ընդհակառակն՝ շնչելու ժամանակ վերցնում են օդից ածխաթթվուտ գազը, և բաց թողնում թթվածին։ Ահա այս պատճառով բույսերը ավելացնում են մթնոլորտի մեջ եղած թթվածնի քանակը։

Այս հանգամանքը նպաստում է կենդանական աշխարհի զարգացմանը։ Սկսում են բազմանալ թե կենդանիների քանակը և թե նրանց տեսակները։ Մթնոլորտի մեջ շատացող թթվածինը նպաստում է նաև ջրերի մեջ առաջացող կենդանիների զարգացմանը։

5-Ր Դ Ա Ս.

Մարդու ծագումը եվ նրա մարմնի կազմությունը.—Կենդանական աշխարհի զարգացման ընթացքում միլիոնավոր տարիներ մեզանից առաջ, ամենազարգացած կենդանիներից, ինչպես ենթադրվում է, կապիկների նախահայրերից ծագեց և առաջ եկավ մի ձև, վորը մանգալով հետին վերջավորությունների վրա, զարգացրեց կուրծքը, թոքերը և ձայնը։

Սրանք մարդկային ցեղի նախահայրերն եին, վորոնք աստիճանաբար զարգանալով դարձել են մարդկային պատմության կրողները։ Սրանք զարգանալով անմիջապես կենդանիներից նրանցից հետո ավելի տարբերվում են։ Ինչպես ամեն մի կենդանու, այնպես ել մարդու մեջ, վողնաշարը մարմնի հիմնական մասն է կազմում, վորի շուրջը զարգացել են մարմնի միս մասերը։ Նրա վողնաշարի վերին մասում, գլխում, վորտեղ տեղավորված է ուղեղը, դեպի մարմնի բոլոր մասերը սկիզբ են առնում և տարածվում ամենից շատ զարգացած զգացողության նեարդերը։ Սրանք երեսի վրա կազմել են տեսողության, լսողության, հոտառության և ճաշակելիքի գործարանները։

Այս նեարդերից զատ գործում են մկանները, վորոնց շնորհիվ շարժվում են մեր մարմնի զանազան մասերը։ Ապա գալիս են մարմնի սիները՝ վոսկորները։ Նրանց կազմած խոռոչներից մեկում՝ կրծքի խոռոչում տեղավորված են թոքերը՝ արյունը մաքրելու համար։ Նրա հետևում—սիրտը չորս մասից բաղկացած, արյան շրջանառության համար։ Ներքևում գտնվում է ստամոքսը, մարսողական գործարաններով՝ բերան, կոկորդ, ստամոքս, բարակ և հաստ աղիքներ։ Արյունը մարմնի ամենակարևոր մասն է։ Նա մանր խողովակների—երակների ու զարկերակների միջով հոսալով, մարմնի բոլոր մասերին մատակարարում է սնունդ։ Նա կազմված է անհամար սպիտակ և կարմիր գնդիկներից։

6-Ր Դ Ա Ս

Ամեն մի կենդանի էակ ձգտում է ապրելու։ Դրա համար կենդանին պայքար է մղում շրջապատի դեմ իրեն ապահովելու և սնունդ ձեռք բերելու համար։ Կենդանիները այդ պայքարում սրում ու զարգացնում են իրենց մարմնի այս կամ այն մասը։

Մարդը կենդանիներից միակն է, վոր իր պայքարը շրջապատի դեմ վոչ թե միւսների նման իր օրգաններով է մղում, այլ գործիքներով։ Նրա առաջին գործիքը եղել է քարը և փայտը։ Սա մարդկային պատմության այն շրջանումն է եղել, երբ մարդ բնության վոչ թե տերն է եղել, այլ նրա ստրուկը, գերին։ Հարստահարողը վոչ թե մարդն է մարդուն, այլ նախնական մարդու համար անհասկանալի և անբացատրելի բնությունը։ Փայտերով մարդ հավաքում եր ծառերից պտուղներ և իր ապրուստը ապահովում։ Կամաց-կամաց մարդը ձեռք է բերում փորձառություն. մի փոքր զարգանում է նրա ուղեղը, և նա սաեղծում է նոր գործիքներ։ Այստեղից սկսվում է քարե դարի շրջանը։ Այս ժամանակ է գտնվում պատահաբար կրակը, վորը մարդու փորձառությունն ավելի է զարգացնում։ Անմշակ ու միատեսակ հնչող մարդկային ձայնը կամաց-կամաց միմեանց մտքեր հայտնելու միջոց է դառնում։ Այս բոլորի հետևանքով բնությունից ապրուստի միջոցները հավաքական ուժերով ձեռք բերելը ավելի հեշտանում է։ Ապրուստի պարեն ձեռք բերելը կրում է վորսորդական բնույթ։ Մարդիկ վորսում են գազաններ և ձկներ։

Թույլ ու անզոր մարդիկ բնության և գազանների դեմ հաղող պայքարելու և սնունդ գտնելու համար կապվում են միմիանց հետ, կազմելով նախնական կոմմունիստական հասայնքները։ Սնունդի չափը, նրա քչությունը, խիստ սահմանափակում է այդ համայնքների կազմը, վորը այն ժամանակ մի կամ մի քանի տասնհակներից էն կողմը չեր անցնում։

Շնորհիվ մոր կատարած դերին համայնքը այդ ժամանակ

կազմված եր կին-մորից և նրա երեխաներից։ Սա այսպես կոչված մայրապետութիւնն եր։ Ցեղային միութիւնը հիմք է ծառայում համայնքի միութեան։ Օտար համայնքը և նրա անդամները նրանց համար վոչնչով չեն տարբերվում թշնամի դաշտներից։ Նրանց դեմ պայքար եին մղում ու հոշոտում։ Համայնքը ընդհանուր ուժերով արտադրում կամ ձեռք է բերում սնունդ և բախչում ընդհանուրի մեջ։ Սնունդի կուտակում կամ մասնավոր սեփականութիւն դեռ չկա։

Մարդկային կեանքի երկրորդ շրջանը սկսվում է հենց վոր այդ համայնքները այնքան բազմանում են, վոր ստիպված են լինում մտածել սնունդի ավելի մեծ պաշար ձեռք բերելու մասին։ Աճումը համայնքին ենթարկում է սովի։ Սրա հետևանքով արտադրութեան նախկին ձևերը և գործիքները դուրս են բերվում անշարժութիւնից և փոխարինվում ավելի բարձր ձևերով։ Վորսորդութիւնից հետո ծագում է անասնապահութիւնը։ Բարեհաջող պայմաններում մարդիկ ձեռք են բերում ավելի շատ կենդանիներ. փորձից սովորում են, վոր լավ կլինի, եթե նրանց պահեն նեղ օրվա համար։ Նույն ժամանակաշրջանին է վերաբերում և երկրագործութեան ծագումը։ Մարդիկ իբրև պաշար հավաքած հացաբույսերի հատիկները ձգում են գետին և մի քանի ամսից հետո նկատում են հասած հասկեր։ Այս երևույթը մի քանի անգամ կրկնվելուց հետո մարդու դեռ շատ թույլ գիտակցութեան մեջ ծնվում է դրանից օգտվելու միտքը։

Երկրագործութիւնը և անասնապահութիւնը թեթևացնում են մարդկանց ապրուստը և դիւրացնում նրանց ապագա զարգացումը։ Ժամանակի ընթացքում բնակչութեան աճումը ստիպում է մարդկանց երկրագործութիւնն ու անասնապահութիւնը միացնել և վարել նստակաց կեանք։ Այս էլ իր հերթին առիթ է տալիս զարգացնելու ու ստեղծելու նորանոր գործիքներ։ Համայնքը մեծանում է և հասնում մեկ կամ մի քանի հարիւր անդամների։ Մարդիկ աշխատում են ըստ հնարավորութեան, թեկուզ պահանջից ավել, սնունդ ձեռք բերելու։ Առաջ է գալիս հավելեալ արտադրութիւնը։ Տղամարդու դերը գերազանցելով կին-մորից, մայրապետութիւնը տեղի է տալիս նահապետութեան։

Ցեղական կապերը քանի գնում լայնանում, նահապետական են դառնում։ Կարիք է զգացվում նախկին կատարողական աշ-

խատանքից խմբի ուժեղ անդամներից մեկին անցնել կազմակերպչական աշխատանքի։ Ամբողջ կազմակերպչական աշխատանքը կենտրոնանում է նահապետի ձեռքում։ Նահապետն է, վոր իրավունք ունի բաժանել աշխատանքը խմբի անդամների միջև, նրան է պատկանում նաև արտադրած մթերքների բաշխման—բաժանման գործը։

Հավելեալ արժեքի առաջ գալը առաջ է բերում նաև արտադրած մթերքների փոքրիկ պահեստներ, այդ պահեստների տերն ու տիրականն է դառնում նահապետը, խմբի կազմակերպիչը։ Այսպիսով ամբողջ տնտեսական միջոցների կենտրոնացումն նահապետի ձեռքում, ուժեղացնում է նրա իշխանութիւնը դեպի խմբի անդամները։ Նահապետը կարող է պահեստներից ավելին վերցնել իր ընտանիքի համար, քան ուրիշ ընտանիքներին է տալիս, նույնպես նաև խմբի զանազան անդամներին։

Նահապետը ընտրովի եր, ընտրում եր խումբը, բայց կամաց-կամաց նահապետ լինելու իրավունքը դառնում է ժառանգական, նահապետը կարող եր դառնալ անպայման նահապետի ընտանիքի անդամներից վոր և է մեկը. վորովհետև նա ավելի մտրիկ է կանգնած նահապետին և ավելի ծանոթ է լինում կազմակերպչական աշխատանքին քան խմբի անդամներից վոր և է մեկը։ Նահապետութեան ժառանգական դառնալը ավելի ևս ուժեղացնում է նահապետի ընտանիքի դիրքը։ Կամաց-կամաց նահապետական խմբի անդամները սկսում են նայել նահապետի վրա իբրև խմբի բոլոր հարստութիւնների լիակատար տեր։ Ահա այստեղից է առաջին անգամ ստեղծվում մասնավոր սեփականութեան հասկացողութիւնը։ Այս հասկացողութիւնը ավելի ու ավելի ամրանում է պատերազմների ժամանակ։ Պատերազմի ժամանակ խմբի հրամանատարը նահապետն է, նա է պատերազմի թե ղեկավարը և թե առաջնորդը, ուստի և նրան է պատկանում ավարի մեծ մասը։

Այսպիսով քանի մեծանում է հավելեալ արժեքի քանակը, այնքան էլ հարստանում է խումբը, այնքան էլ մեծանում է նահապետի իշխանութիւնը, այնքան էլ խմբի անդամները ավելի են համոզվում վոր խմբի ամբողջ հարստութեան տերը նահապետն է։

7-ՐԴ ԴԱՍ

Սարկութեան ծագումը

Մարդկանց շահագործվելու ամենահին և ամենակոպիտ ձևը, եղել է սարկութիւնը։

Բայց ինչպես է նա առաջ եկել։ Սարկութիւնը առաջ եկավ այն շրջանում, երբ մարդիկ իրենց նախնի վայրենական

դրութիւնից կամաց-կամաց դուրս եկան, երբ նրանք համեմատաբար ավելի զարգացան և իրենց ապրուստի միջոցները ձեռք բերելու համար ավելի կազմակերպված կռիվ սկսեցին մղել բնութեան դեմ։

Ստրկութեան շրջանից առաջ, մարդիկ բավականանում էին միայն այն սահմանափակ քանակութեամբ սնունդով, որը նրանք ձեռք էին բերում նահապետի կամ արտադրութեան (աշխատելով ապրուստի միջոց դուրս բերել) կազմակերպիչի ղեկավարութեամբ։ Մարդկանց զարգանալով և բազմանալով նրանց բնութեան դեմ մղված կռվի ձևերն ու միջոցներն էլ հետզհետե կատարելագործվում և փոխվում է։ Առաջ են գալիս երկաթեա գործիքներ, զենքեր ավելի կատարելագործված ձևով և այլն։ Եվ ահա գալիս է մի շրջան, երբ համայնքի մեջ մտնող բոլոր մարդկանց աշխատանքի անհրաժեշտութիւնը այնքան էլ զգալի չի լինում, ինչպես առաջ, երբ համայնքի բոլոր անդամները միասին պիտի աշխատեին, որպեսզի իրենց գոյութիւնը պաշտպանեին։ Այժմ արդեն, շնորհիվ ավելի կատարելագործված միջոցների, այնքան է արտադրվում, որ նույնիսկ արտադրված բարիքները շատ անգամ ավելանում են։ Հետզհետե նահապետի կամ արտադրութեան կազմակերպչի իշխանութիւնը ժառանգական դարձավ։ Նահապետը իր ընտանիքի անդամներով և մոտիկ ազգականներով առանձնացավ մի տեսակ համայնքի միւս անդամներից և նրա հեղինակութիւնը գնալով մեծացավ։ Նահապետը իր ընտանիքով սկսեց ապրել համայնքի կողմից արտադրվող բարիքների ավելցուկով։ Այստեղից արդեն սկսվում է մարդկանց շահագործելու առաջին շրջանը։ Նահապետի և նրա ընտանիքի կողմից, համայնքի անդամներին շահագործելը, գնալով ավելի շատացավ։ Նահապետը այժմ խառնվում է ոչ միայն իր ձեռքի տակ աշխատողների, արտադրութեան կազմակերպման գործին, այլ նաև նա այդ աշխատողների կեանքի և մահվան բացարձակ տնորինողն է հանդիսանում։

Բայց սա դեռ ստրկութիւն չէ։ Նահապետը ստիպված էր ավելի զգուշ վարվել աշխատավորի հետ, որովհետև այդ աշխատավորները իր ցեղին պատկանող մարդիկ էին։ Նահապետը մանավանդ ստիպված էր աշխատավորի հետ զգուշ վարվել, նրան կերակրել, հիվանդութեան և մահվան դեպքերից հեռու պահել, որովհետև չէ՞ որ այդ աշխատավորը իր աշխատանքով պահում էր նահապետին իր ընտանիքով և ազգականներով։ Աշխատավորի կորուստը՝ նորերով դժվար էր փոխարինել։

Սակայն պատերազմները վերացնում են այդ դժվարութիւնը նահապետի առաջից։

Համայնքին անհրաժեշտ է լինում ավելի բարերար միջավայր և ավելի «կուլտուրական» համայնքներից թալան ձեռք բերելու համար, հարձակումներ գործել, պատերազմել հարևան համայնքի հետ։ Այս կռիվները նախնական մարդկանց համար բղխում էին նույն տնտեսական անհրաժեշտութիւնից, ինչպես նրանց մղած կռիվը բնութեան դեմ։ Եվ ահա պատերազմում ձեռք են բերվում գերիներ, որոնք առատորեն կարող են փոխարինել նահապետի ձեռքի տակ աշխատողներին։ Այս անգամ արդեն նահապետը շահագրգռված չէ իր նոր աշխատողների հետ զգուշ վարվելու և հոգալու նրանց կեանքի մասին։ Գերին դառնում է նահապետի ստրուկը։ Այժմ նրանք իր ցեղակիցները չեն և, որքան էլ խավարն է, նրանց կորստեան դեպքում կարելի է փոխարինել նորերով։ Ճիշտ է, նոր գերիներ ձեռք բերելու համար հարկավոր է նոր պատերազմ, իսկ պատերազմել հեշտ բան չէ։ Բայց վերջում այդ գերիներ (ստրուկներ) ձեռք բերելը չափազանց հեշտացավ, շնորհիվ նրան, որ պատերազմները նրանց թիվը շատացրել էին, որպես ապրանք, փոխանակութեան միջոցով կարելի եր պետք եղածին չափով ձեռք բերել նրանց։ Ստրուկների բազմութիւնը համայնքում ստեղծում է այնպիսի դրութիւն, որ ցեղի նախկին աշխատավոր անդամներն էլ խիստ չեն զանազանվում նորեկ ստրուկներից, նրանցից շատերն էլ խառնվում և դառնում են ստրուկներ ու այդպիսով ստեղծվում է ստրկատիրական համայնք։

Բայց ի՞նչ բան է ստրուկ։

Ստրուկ—դա մարդկանց այն խումբն եր, որ ստրկատերի կողմից գործածվում եր որպես արտադրութեան գործիք։ Ստրկական շրջանում կար արտադրական գործիքների այսպիսի դասավորում։ 1) Համր, անկենդան գործիքներ, ինչպես օրինակ կացին, դաղդեահ և այլն. 2) կենդանի, բայց անխոս գործիքներ ինչպես ընտանի կենդանիներ և 3) խոսող գործիքներ, այսինքն մարդ—ստրուկներ։ Այսպիսով մենք տեսնում ենք, որ ստրուկը հանդիսանում է տիրոջ ձեռքին օգտակար մի գործիք, որի հետ տերը ինչպես ցանկանար, այնպես էլ կվարվեր։ Ստրուկի կեանքը տիրոջ ձեռքին նր և տերը ամեն րոպե կարող եր նրան կեանքից զրկել այնպես, ինչպես որ, մենք այժմ կարող ենք մեր ձեռքին եղած մի փայտի կտոր կոտրել դեն գցել, ու դրա համար մեզանից ոչ ոք հաշիվ չի պահանջի։ Տերը կարող եր ստրկին վաճառել, նրան փոխել մի ուրիշ կենդանու կամ ապրանքի հետ։ Ստրուկին նրա տերը միայն կարող եր ամուսնացնել։ Տերը կարող եր նույնպես նրան բաժանել իր ընտանիքից։

Տերերը հետզհետե սկսեցին վոչ մի հոգս չտանել ստրուկների բնական կարիքներին բավարարութիւն տալու մասին։ Նրանց համար ձեռնտու եր լիմոնի պես քամել ստրուկի վերջին ուժերը։ Օգտվել նրանից վորքան կարելի է շատ, և այնուհետև, վորպես մի անպետք իր, դեն շպրտել նրանց, փոխարինելով ավելի թարմ ստրուկներով։ Այսպիսով ստրուկների բազմացումը հետզհետե կանգ է առնում. նրանք մեռնում են ավելի շատ՝ քան ծնվում։ Ստրկի մեջ զարգանում ու միս և արիւն է դառնում նվաստանալու, ճնշվելու, խոնարհվելու հոգեբանութիւնը և նրանք շատ քիչ են մտածում իրենց անել դրութիւնից դուրս գալու մասին։ Պատմութեան մեջ հազվագիւտ են այնպիսի դեպքեր, վոր ստրուկները լուրջ փորձ արած լինեն իրենց ամոթալի դրութիւնից դուրս գալու։

Հին ընտանիքը—

Ստրկութեան այդ այլանդակ կարգերը, իրենց կնիքը դրին նաև ազատ ընտանիքների վրա, վորոնց անդամները ստրուկների տերերն եին հանդիսանում մեծ մասամբ։ Այն անսահման իրավունքները, վոր ուներ ստրկատերը իր ստրուկների վրա, գրեթե նույնութեամբ ուներ ազատ ընտանիքի հայրը կամ նահապետը իր ընտանիքի իւրաքանչիւր անդամի վրա։ Հայրը իրավունք ուներ անարգելու իր վորդիների բոլոր գործերը, նա կարող եր անպատիժ կերպով նրանց սպանել և նրանց, վորպես ստրուկների, ծախել։ Ի հարկե հասկանալի է, վոր ընտանիքի պետը ավելի հազվագիւտ եր այդպես դաժանութեամբ վերաբերվում իր ընտանիքի անդամներին, քան ստրկատերը՝ իր ստրուկին։

Հին պետութիւնը։—

Ստրուկների աշխատանքի միջոցով, հսկայական հարստութիւն եր կուտակվում։ Արդիւնաբերութիւնը սկսեց ծաղկել։ Արտադրվում եր մեծ քանակութեամբ ապրանք։ Անհրաժեշտ եր փոխանակել կամ վաճառել արտադրված ապրանքները։ Առաջ է գալիս շուկան և վաճառականութիւնը։

Բացի ստրուկներից և ստրկատերերից առաջ են գալիս հարուստները և ազատները ազատ մարդկանց շրջանում։ Երկրի հարստութիւնը հետզհետե կենտրոնանում է վաճառականների և ստրկատերերի ձեռքին։

Մի քանի հարևան համայնքներ կամ ցեղեր բազմանալով միանում են և կազմում ազգ, առանձին պետութեամբ։ Պետութիւնը այնուհետև իր անսահման իշխանութիւնը հաստատում է ազգաբնակութեան վրա։ Առաջ են գալիս պետական չինովնիկներ, վորոնք արտոնալ մի դաս են ներկայացնում և անխնա շահագործում ժողովրդին։ Պետական բիւրոկրատական այս ձևը մեծ մասամբ տարածված եր արևելեան երկրներում՝ Պարսկաստանում, Չինաստանում և այլն։ Իսկ Հին Հունաստանը և Հռոմը բոլորովին տարբերվում եին իրենց պետական ձևով արևելեան բռնապետութիւնից, վորոնց մասին այժմ մենք կխոսենք առանձին։

8-Ր Դ Ա Ս

Հին Հունաստան եվ Հռոմ.—

(Նախքան բուն նիւթին անցնելը, մի քանի խոսքով հասկացողութիւն տալ ունկընդիրներին Հին Հունաստանի և Հռոմի ծագման և այդ երկրների ապագա բարգավաճման մասին)։

Հին Հունաստանում և Հռոմում պետական ձևն ու երկրի օրենքները այնպես եին, վոր թույլ չեին տալիս անհատին այնպես հարստահարվելու, ինչպես արևելեան բռնապետական երկրներում։ Սակայն սկզբի շրջաններում, գիւղացիութիւնը և քաղաքի աղքատ բնակչութիւնը, պարտատեր լինելով ստրկատերերին, կախման մեջ եր վերջիններից։ Եվ ահա այդ կախման պայմանները թեթևացնելու, ավելի ազատ կեանքի պայմաններ ձեռք բերելու համար, սկսվում է մի դարավոր կռիվ։ Դեմոսի (ժողովրդի) այդ կռիվները շատ անգամ ապստամբութիւնների և արիւնահեղ ընդհարումների ձև են ստանում։

Սակայն դեմոսը այդ կռիվներից հաղթող դուրս եկավ և ձեռք բերեց պետութեան մեջ հավասար քաղաքական իրավունք։ Քրիստոսից առաջ 6-րդից մինչև 4-րդ դարը, ժողովուրդը Աթենքի հանրապետութեան մեջ, վայելում եր այնպիսի քաղաքական կատարեալ ազատութիւն, վոր մեր օրերումն էլ չկան։ Բոլոր պաշտոնիաները ընտրվում եին։ Բայց այս բոլոր իրավունքներ և ազատութիւններ վայելող ժողովրդի կողքին, ապրում եին շատ ավելի մեծ թիվ ներկայացնող ստրուկներ, «կենդանի գործիքներ», վորոնք իրենց աշխատանքով ապրեցնում եին ազատներին և ծաղկեցնում եին երկրի հարստութիւնը։

Աթենքի 90,000 քաղաքացիների կողքին ապրում եին 365,000 ստրուկներ։

Այդպես եր նույնպես հին Հռոմում։ Այստեղ նույնպես ժողովրդական լայն մասսաներ—պլեբեյներ դարերով կռիվ մղեցին ստրկատեր արիստոկրատների դեմ և վերջ ի վերջո ձեռք բերին քաղաքական կատարեալ ազատութիւններ։ Իսկ ստրուկները շարունակում եին մնալ իրենց „կենդանի գործիքի“ դերում։

Հետզհետե, ստրակատերերը, արդիւնաբերական աշխատանքը

կազմակերպելու գործը թողին։ Նրանք այդ գործը հանձնեցին, իրենց ավելի ընդունակ ստրուկներին և իրանք միանգամայն ազատ մնացին արդիւնաբերական աշխատանքներին մասնակցելու գործից։ Առօրեա արդիւնաբերական աշխատանքներից ազատ լինելու պատճառով, արիստոկրատ ստրկատերերը իրենց ժամանակի մեծ մասը նվիրեցին գիտութիւններին և գեղարվեստին։ Այդ է պատճառը, որ Հին Հունաստանում և Հռովմում այնպես ծաղկած դրութեան հասան գիտութիւնները—մանավանդ փիլիսոփայութիւնը, աստղագիտութիւնը և գեղարվեստը։

Սպարտակի ապստամբութիւնը.—

Այն ժամանակվա մարդկանց համար այդ դրութիւնը բնական եր։ Նրանց կարծիքով կարելի եր կռվել և նոր իրավունքներ ձեռք բերել ազատ դեմոսի համար. բայց մտածող իսկ չկար ստրուկների ազատութեան համար։ Հին Հռովմի ամենահայտնի ժողովրդական գործիչները՝ Գրաքխիան եղբայրներն նույնիսկ, իրանց գործունեութեան ամբողջ ընթացքում, չեն մտածել ստրուկների վիճակի բարելավման մասին։ Բայց ստրուկների դրութիւնը այնքան ծանր եր, որ նրանք ապագայում մի շատ լուրջ փորձ արեցին, ապստամբութեան միջոցով այդ դրութիւնից դուրս գալու համար։ Քրիստոսի ծնունդից առաջ, առաջին դարում Հռովմի Գլադիատորների (այն ստրուկները, որոնք վարժվում եին առանձին դպրոցում կրկեսներում գազանների հետ մենամարտելու համար) դպրոցից, մի շատ հանդուգն և քաջ ստրուկ, Սպարտակ*) անունով, փախչում է և կարճ ժամանակում իր շուրջն է հավաքում 70,000 ստրուկների, որոնք ապստամբվում են Հռովմեական կայսրութեան դեմ։ Բավական երկար ժամանակ (մոտ երկու տարի) Իտալիայի հարավային մասը գտնվում եր ապստամբների ձեռքին և մի բոպե ապստամբները սպառնում եին Հռովմը գրավելու։ Սակայն շուտով Սպարտակի զորքի մեջ խռովութիւն և անհամաձայնութիւն ծագեց և հռովմեական զորքերը խորտակեցին ապստամբների բանակը։ Սպարտակը կռվի դաշտում սպանվեց ու սկսվեց մի սոսկալի ջարդ ամենաբարբարոս ձևերով։

Ստրկական հասարակակարգի քայքայման պատճառները.—

Սպարտակի ապստամբութիւնը ճնշվելուց հետո, ստրուկների դրութիւնը չբարելավվեց։ Բայց ստրկական հասարակարգը,

*) Աստեղից եր վերցրել իր Սպարտակ կեղծ անունը Գերմանական հայտնի կոմունիստ հանգուցեալ Կարլ Լիբկնեխտը, որով և կոչվում եր մի ժամանակ Գերմանիայի այժմեան կոմունիստական կուսակցութիւնը (սպարտակեաններ)

կեանքի նոր պայմանների շնորհիվ, արագ քայլերով, դիմում եր դեպի կործանումը։

Մենք վերևը տեսանք, որ շնորհիվ ստրուկների համար ստեղծված ամենածանր պայմանների, նրանց աճումը կանգ եր առել։ Նոր ստրուկներ, ձեռք եին բերվում պատերազմի միջոցով։ Բայց հին աշխարհի պատերազմական գործողութիւնները սկսեցին հետզհետե անհաջող ընթանալ։ Հռովմեական կայսրութեան բանակի գլխավոր ուժը կազմում եր գիւղացիութիւնը։ Ստրուկները զինվոր լինելու իրավունք չունեին։ Ստրկատերերը աննշան թիվ եին կազմում բանակում։ Նրանք վարում եին բացառապես բարձր զինվորական պաշտոններ։ Անվերջ պատերազմների շնորհիվ գիւղացիութեան տնտեսութիւնը հետզհետե սկսվում եր քայքայվել։ Գիւղացիութեան տնտեսութիւնը քայքայվում եր վոչ միայն այն պատճառով, որ մարդկային զոհերի մեծագույն տոկոսը իր շարքերից եր գնում, այլ նաև այն պատճառով, որ պատերազմի հսկայական ծախսերը նա եր հոգում տուրքերի միջոցով, իսկ պատերազմի ուված օգուտներից գիւղացիութիւնը ամենից քիչ եր օգտվում, ավարի մեծ պատառը ընկնում եր դարձեալ ստրկատեր ազնվականների ձեռքը։

Պատերազմների երկարատևութիւնը գիւղացու տնտեսութիւնը վերջնականապես քայքայում են։ Գիւղացին ստիպված է դիմել վաշխառուին, որ սովորաբար նույն ստրկատեր ազնվականն է լինում։ Բացի այդ գիւղացու փոքրիկ տնտեսութեան կողքին ծաղկում է ազնվականների խոշոր գիւղատնտեսութիւնը։ Ազնվականները, իրենց հարիւրավոր ստրուկների միջոցով, հնարավորութիւն ունեին ավելի մեծ քանակութեամբ և եժան հաց արտադրել ու շուկայում ծախել։ Գիւղացին հնարավորութիւն չունի այդ մրցման դիմանալու և նա ամբողջապես քայքայվելով ծախում է իր վերջին ունեցածը և գնում քաղաքը (Հռովմ)։ Հողերը հետզհետե կենտրոնանում են խոշոր կալվածատերերի ձեռքին։

Այսպիսով քաղաքում հարիւր հազարներով „պրոլետարներ“ եին կենտրոնանում։ Այդ «պրոլետարիատը» միանգամից տարբերվում եր ներկայիս պրոլետարիատից։ Դա բոսեակային պրոլետարիատն եր, որը չեր աշխատում, ձրիակեր եր և կաշառվող։ Քաղաքը այդ բոլորին գործ տալ չեր կարող։ Պետութիւնը ստիպված եր նրանց պահելու։ Երբ քաղաքական կուսակցութիւնները իշխանութիւն ձեռք բերելու համար կռիվ եին մղում իրար դեմ, կաշառում եին այս ձրիակեր «պրոլետարիատին», որպեսզի իրենց հետ միանա։ Եվ նրանք իրենց

ձայները տալիս էին նրան, ով ամենից շատ էր վարձատրում։

Գիւղացիութեան քայքայումով բանակը կորցնում էր իր ուժը։ Պարզիտ և փչացած այն ժամանակվա քաղաքի „պրոլետարը“, վորը սովորել էր ձրիակերութեան և քաղաքից չէր ուզում դուրս գալ, իհարկե չէր կարող վոխարինել նախկին առուրգ և կորիճ գիւղացուն։ Առաջներում գիւղացիական բանակի և բարձր տեխնիկայի միջոցով, հեշտ էր վայրենիներին հաղթել և գերիներ վերցնել, իսկ այժմ չափազանց դժվար։ Ընդհակառակն սկսում է մի շրջան, երբ կայսրութեան զորքերը սկսում են պարտութիւններ կրել։

Այսպիսով կամաց-կամաց սկսվում են քայքայվել ստրկատիրական հասարակութեան հիմքերը։

9-Ր Դ Ա Ս

Քրիստոնեութիւնը, եկեղեցու ծագումն ու զարգացումը.— Ստրուկների անելանելի դրութիւնը, ազգարնակչութեան աղքատութիւնը մի կողմից, միւս կողմից ստրկատեր ազնվականների և պալատականների շռայլ և անբարոյական կեանքը, խնճույքներն ու զեխութիւնները այն ժամանակվա մարդկանց ստիպում էր փրկութեան միջոցներ փնտրելու։ Եվ ահա քրիստոնեութիւնը գալիս է այդ փրկութեան ճանապարհը ցույց տալու բոլոր տանջվածներին և հարստահարվածներին։ Քրիստոնեական վարդապետութիւնը գալիս է ավետելու, վոր այս երկրի վրա տանջվածներին և հալածվածներին, հանդերձեալ աշխարհում, սպասում է երկնային դրախտ, վորը վոչ թե մեր կեանքի նման անցողական է լինելու, այլ հավիտենական։ Եվ այդ է պատճառը, վոր նա կարճ ժամանակում ունենում է հսկայական հաջողութիւն ստրուկների շրջանում։ Քրիստոնեութիւնը միաժամանակ կռիվ և հայտարարում երկրային անցողական զվարճութիւններին, քարոզում է վողորմած և բարեգործ լինել և սպառնում է քրիստոնեական այդ օրենքները խախտողներին, դժոխքի արհավիրքներով։ Այդ պատճառով էլ, սկզբի շրջանում, եկեղեցին ուքրիստոնեաները սոսկալի հալածանքների էին ենթարկվում տիրող դասի և նրա պետութեան կողմից։

Ուրեմն քրիստոնեութիւնը երևան եկավ, վորպես ստրկութեան գաղափարախոսութիւն։ Ստրուկները անկարող էին, շնորհիվ այն պայմանների, վորի մեջ գտնվում էին, քաղաքական կամ նույնիսկ ազատագրական կռիվ մղել տիրողների դեմ։ Վոչ միայն նրանց տնտեսական եվ հասարակական դրութիւնն էր ստրկական, այլ նաև նրանց հոգեբանութիւնը։ Եվ՝ ահա ստրկական այդ հոգեբանութեան արտահայտիչն է դառնում քրիստոնեական

եկեղեցին։ Նա քարոզում էր լռութեամբ տանել այս աշխարհի տանջանքները, վորպեսզի հանդերձեալ աշխարհում հավիտենական երջանկութիւն ձեռք բերվի։

Եկեղեցու ազդեցութիւնը գնալով ուժեղանում էր։

Բավական երկար ժամանակ խիստ հալածանքներից հետո, պետութիւնը համոզվեց, վոր այլևս անհնար է արդեն ժողովրդական լայն մասսաներ իր մեջ պարփակող եկեղեցու դեմ կռիվ մղել։ Այժմ պետութիւնը սկսեց եկեղեցու մեջ իր դաշնակցին վորոնել։ Պետութիւնը ստիպված եղավ ճանաչել եկեղեցին, վորպես լեգալ կազմակերպութիւն։ Ազատութիւն ձեռք բերելով, եկեղեցին սկսեց ավելի ծաղկել և փարթամանալ։ Նրա հեղինակութիւնը ավելի ևս ամրացավ ժողովրդական լայն մասսաներում։ Սկսվեց ամեն կողմից նվերներ թափվել եկեղեցու գանձարանը։ Եկեղեցին հետզհետե մեծ հարստութիւն ձեռք բերեց։ Կայսրները և ապագայում գերմանական թագավորները, իրենք էլ սկսեցին մեծամեծ նվերներ տալ եկեղեցուն, վորովհետև եկեղեցին այժմ իրենց դաշնակիցն էր, կորցրել էր իր նախկին մաքրութիւնը, տիրող կարգերը պաշտպանելու կողմնակից էր և հնարավորութիւն ուներ իր քարոզների միջոցով հանգստութիւն պաշտպանելու ժողովրդի մեջ։ Բացի այդ, եկեղեցին իր բարեգործական հիմնարկութիւններով, աղքատ ազգարնակութեան օգնութեան էր հասնում և այդպիսով պետութեան դեմ դուրս գալու հնարավորութիւնը պակասեցնում իր ժողովրդի մեջ։

1007
30475

Ֆեոդալական հասարակարգը.—

Բայց մենք այժմ անցնենք ֆեոդալական հասարակութեան ծագման։ Մենք արդեն տեսանք, վոր ստրկատիրական հասարակակարգը՝ ինչ պայմաններում սկսվեց քայքայման ենթարկվել։—

Հռովմեական կայսրութիւնը սկսեց այլևս չդիմանալ Գերման բարբարոսների առաջխաղացումներին և իր երկրամասերի մեծ մասը անցավ վերջիններիս ձեռքը։ Այստեղից սկսեց միջնադարը, վորը նույնպես սկիզբն է համարվում ֆեոդալական հասարակարգի։

Ինչքան վոր ազգարնակչութիւնը խտանում էր, այնքան բարբարոս ցեղերը ստիպված էին վերջ տալ իրենց թափառաշրջիկ կեանքին, կապվել հողի հետ, վորովհետև միայն հողից ստացվող արդիւնքով՝ հնարավոր էր համայնքի բազմանդամ անդամներին կերակրել։ Բայց միջնադարեան համայնքի անդամների [illegible] է բազմանում։ Դեռ նահապետական համայնքում կարգ [illegible] բաժանումներ։ Միջնադարեան համայնքում այս ընտանեկան բաժանումները ավելի անհրաժեշտ

դարձան։ Երկրագործական աշխատանք տանելու համար, առանձին ընտանիքների ուժն էլ բավական և։ Ամբողջ համայնքը իրար հետ միանալու և միասին աշխատելու՝ մի կտոր հողի վրա, կարիք չկար. առանձին ընտանիքները ունեցան իրենց հողերը։ Այսպիսով նախ քան բուն ֆեոդալական հասարակակարգ անցնելը, երկրագործական համայնքը կազմված եր մի քանի իրար ազգակցական կապերով միացած ընտանիքներից։ Այդ ընտանիքները սակայն ամեն դեպքում առանձին առանձին չեին գործում։ Այն դեպքում, երբ կարիք եր լինում նոր անտառներ կտրելու և վարելահող դարձնելու, նոր բնակարաններ շինելու, համայնքի մի քանի ընտանիքներ իրար օգնում եին կամ համայնքը ամբողջապես միասին եր գործում։

Համայնքի վերաբերեալ բոլոր գործերը կարգադրում եր ավագների—ընտանիքի հայրերի-խորհուրդը։ Իսկ երբ հարկավոր եր լինում պատերազմ վարել, այն ժամանակ ավագների խորհուրդը իրանից ընտրում եր ժամանակավոր մի առաջնորդ, մինչև պատերազմի վերջը։

Բայց հետզհետե անհավասարության նշաններ են երևում համայնքում։ Նախ այն, որ ավագների խորհրդի կողմից ընտրված առաջնորդը առանձնանում է համայնքի երկրագործական ձեռնարկություններից և երկրորդ՝ հողի հատկական սեփականության կողքին, գոյություն ունի մասնավոր սեփականություն։ Այն ընտանիքները, որոնք իրենց աշխատանքի միջոցով նոր հողեր եին մաքրում և երկրագործության համար պիտանի դարձնում, այդ հողերը մնում եր իրենց մասնավոր սեփականություն։ Նույն և պատերազմի ժամանակ ձեռք բերված հողերը, բաժանվելուց հետո, այլևս նորից չեին բաժանվում։ Իսկ սկզբի շրջանում, ով մի քիչ ավելի հող ուներ իր ձեռքին, նրան ավելի հեշտեր այդ հողերը ընդարձակել պատերազմի ժամանակ ավելի նշանավոր գերք ունենալ և պատերազմից ստացված ավարից մեծ մաս ստանալ։ Եվ այսպես տնտեսական գերազանցություն ունենալը, հնարավորություն եր տալիս համայնքի մնացած անդամներին տնտեսապես ենթարկված դրության մեջ պահելու։ Հաճախակի սովերին, երաշտներին, կարող եին դիմանալ միայն խոշոր տնտեսություններ. այսպիսի դժբաղդությունների ժամանակ ավելի մեծ տնտեսությունները օգնության եին հասնում համայնքի անդամներին, իսկ դրա փոխարեն համայնքի անդամները պարտավորվում եին իրենց աշխատությամբ հատուցում տալու։ Այդպիսի աշխատանքները հնարավորություն եին տալիս ավելի ընդարձակելու մեծ տնտեսատերերի կալվածները։ Հետզհետե

սկսեցին ընտրել միայն այդպիսի հարուստներից պատերազմի ղեկավարներ։ Եվ վորովհետև տնտեսական ուժը այդ հարուստների կողմն եր, նրանք սկսեցին ստանձնել, վոր իրենց ժամանակավոր իրավունքները դառնա մշտական և ժառանգական։ Ապագայում այդպես էլ եղավ։

Եվ այդ ժամանակվանից եր, վոր սկսվեց ֆեոդալական հասարակությունը իր սկիզբն առնել։

Համայնքից դուրս եկած հարուստ երկրագործը, վոր այժմ հարստության հետ ունի և ժառանգական զինվորական ղեկավարի իշխանությունը՝ դառնում է իսկական ֆեոդալ։

Ճորտություն.—

Ֆեոդալները համայնքի կեանքում հետզհետե սկսում են կատարել բոլորի համար օգտակար գործեր, իսկ այդ գործերը հնարավորություն են տալիս ֆեոդալին իր իշխանությունը ավելի ամրապնդել, և ժողովրդին ավելի ափաշվարա և կոպիտ կերպով շահագործել։ Նրանք շինում են մեծ և ամուր բերդեր, թշնամիներից պաշտպանվելու համար, ճանապարհներ են անց կացնում, կամուրջներ շինում, դժբախտ դեպքերում համայնքի անդամներին օգնության են հասնում և այլն և այլն։

Այս բոլորը, ֆեոդալները անում եին, իհարկե, վոչ իրենց հաշվին, այլ ժողովրդի աշխատանքի միջոցով։ Գիւղացիները իրենց աշխատանքով եին հատուցում ֆեոդալներին այս գործերի համար։ Քանի ֆեոդալները դեռ միայն հարուստ գիւղացիներ եին, նրանք իրենց պարտքի տուրքը ստանում եին, գիւղացիներին աշխատացնելու ձևով։ Երբ նրանց իշխանությունը ավելի զարգացավ և ամրապնդվեց, սովորական պարտքի այդ հատուցումը, դարձավ մշտական տուրք, իսկ տուրքը մշտական աշխատանքով վճարելը—ճորտական աշխատանքի հիմքն և կազմում։ Գիւղացիները այնուհետև ժառանգաբար, տարվա վորոշ օրերում, պարտավորվում եին ֆեոդալի համար աշխատել։ Իսկ ժամանակի ընթացքում ֆեոդալները հնարավորություն ունեցան այդ տուրքի չափը ավելի մեծացնել։ Գիւղացիների մեջ էլ կային հարուստներ և աղքատներ։ Պարզ է, վոր ավելի աղքատ գիւղացիները ավելի շատ կախում են ունենում ֆեոդալներից, վորովհետև նրանք զրկված բացառապես տիրոջ վողորմությամբ եին ապրում։ Ֆեոդալին ամենախիստ կերպով ենթարկվածները, զրկվում են տեղափոխվելու իրավունքից, և ժամանակի ընթացքում, իրենց աշխատանքի մեծ մասը նվիրում են ֆեոդալի տնտեսության վրա աշխատելուն։ Սրանք արդեն իսկական ճորտերն են։ Մնացած գիւղացիները իրավունք ունեին տեղափոխվել, բայց այս

դեպքում իրանց ունեցած հողը անցնում է ֆեոդալի ձեռքին, վորովհետև ֆեոդալը համարվում էր այն ամբողջ հողի կալվածատերը, վորի վրա բնակվում էին իր հպատակները։

Ճորտատիրական այս կարգերը երկար դարեր պահպանեցին իրենց գոյությունը Եվրոպայում, իսկ Ռուսաստանում, ճորտությունը վերացվեց միայն 1861 թվին, Ալեքսանդր II կայսրի օրով։

Համարներ.—Ճորտատիրական կարգերում արհեստավորների դրությունը քիչ թե շատ տանելի էր, քան մեացած գիւղացիներինը։ Արհեստավորը վորոշ տուրք էր տալիս իր տիրոջ և այնուհետև այդ տիրոջ հետ համարեա գործ չուներ։

Արհեստավորի արտադրածը, սկզբի շրջանում, շատ քիչ բան էր։ Գործիքները այնքան քիչ էին և անհարմար, վոր մի գործ շինելու և մի արհեստի նվիրվելու համար, անհրաժեշտ չէր վոր մի քանի արհեստավորներ հավաքվեին և ընկերովի ձևով գործ առաջ տանեին։ Մի մարդ էլ բավական էր, վոր եղած գործիքների միջոցով իր արհեստը առաջ տաներ։ Ամենաշատը, արհեստավորը կարիք կարող էր զգալ մի աշակերտի, վոր ապագայում նույնպես արհեստավոր—քարգեահ պիտի դառնար։ Արհեստավորի այդ աշակերտը գրեթե դառնում է նրա ընտանիքի անդամներից մեկը։ Նա տիրոջ ընտանիքի հետ է կերակրվում։ Տերը, բացի այս ընդհանուր հոգացողությունից, տալիս է աշակերտին վորոշ թոշակ, վորպեսզի վերջինս կարողանա ապագայում իր համար գործիքներ ձեռք բերել և անկախ արհեստավոր դառնալ։ Տերը հավասար չափով աշխատում է իր աշակերտի հետ և այստեղ վոչ մի ձգտում չկա տիրոջ մեջ, աշակերտին շահագործելու։

Մի կողմից հողին կպած գիւղացին ավելի և ավելի էր ենթարկվում ֆեոդալի շահագործման, միւս կողմից արհեստավորը և առևտրականը աստիճանաբար ազատվում էին նրա շահագործումից։ Դրա պատճառն այն է, վոր գիւղացու արտադրության միջոցները, (գլխավորապես հողը) անշարժ էին, իսկ արհեստավորի արտադրության միջոցները՝ գլխավորապես գործիքները, ավելի հեշտությամբ կարելի էր տեղափոխել իր արհեստի համար ավելի բարենպաստ միջավայր։ Բացի այդ, արհեստավորի աշխատանքի տեխնիկան, (գործիքների ավելի կատարելագործությունը) շատ ավելի արագ է առաջդիմում, քան գիւղատնտեսական տեխնիկան։

Հետզհետե արհեստավորները, կենտրոնանում են, նոր-նոր առաջացող քաղաքներում։ (Հաշվի չենք առնում այստեղ, հին Հռովմեական տիրապետությունից մեացած քաղաքները)։ Նրանց

քաղաք գնալուն մեծ արգելք չեն հարուցում ֆեոդալները, վորովհետև արհեստավորի տուրքը ֆեոդալին՝ հողային տուրք էր (հողից ստացված արդիւնքի մի մասը) և վոչ աշխատանքի տուրք։ Իսկ քաղաքում նրանք հնարավորություն ունին այդ տուրքը վճարելու, վորովհետև նրանք բացի արհեստից, ունին և հողեր ու հողագործությամբ նույնպես են զբաղվում։ Միջնադարեան քաղաքը շատ նման էր գիւղին և այնտեղ բնակվող ազգաբնակչությունը, գիւղացու նման զբաղվում էր երկրագործությամբ։

Բայց հետզհետե արհեստավորի գործիքները կատարելագործվում են, առևտուրը զարգանում է։ Ինչ վոր արհեստավորը արտադրում է, անմիջապես վաճառականը գնում է, տանում է ուրիշ երկրներ փոխանակում ուրիշ ապրանքների հետ։ Այսպիսով արհեստավորի մասնագիտության, նրա կատարելագործված գործիքների հետ, ավելանում է նաև արհեստավորի արտադրած ապրանքի պահանջը։ Արհեստը այժմ նրան լիակատար բավարարություն է տալիս և նա ձեռք է քաշում հողագործությունից։ Գիւղում ապրող ֆեոդալին, այժմ ձեռնտու է քաղաքի արհեստավորից գնել իր համար պետք եղած ապրանքներ ու գործիքներ, քան գիւղի արհեստավորից։

Բայց առանձին-առանձին արհեստավորները կարող էին իրանց տնտեսությունը շատ անգամ վատագի ենթարկել։ Եթե մի հրդեհ լիներ, կամ արհեստավորի գործիքները եթե գողանային կամ հազար ու մի այսպիսի փորձանքներից մեկը պատահեր արհեստավորին՝ նրա բանը պրծած էր։ Նա այդ դեպքում կաղ-քատանար և կանբախտանար։ Բացի այդ, արհեստավորները, իրար հետ մրցելով, իրար ուժը պակասեցնում են և ավելի փոքր արհեստավորները, վորոնք մեծամասնություն են կազմում, չկարողանալով մրցման դիմանալ՝ կ'սնանկանան։ Ահա այս պատահականությունների դեմ կռվելու և տնտեսապես ավելի ամրապնդվելու համար, արհեստավորները առաջ են բերում համքարական կազմակերպություններ։

Այդ կազմակերպությունների էությունը կայանում է նրանում, վոր միևնույն արհեստի վարպետները, վորոշ պայմաններով ու առանձին կանոնադրությամբ, կապված են իրար հետ և ունին իրենց ընտրված վարչությունը։ Նրանք խիստ կերպով հետևում են, վոր այդ պայմանների վոչ մի կետը չխախտվի։ Արհեստավոր վարպետը այժմ արդեն, շնորհիվ փոխանակության զարգացման, գործիքների կատարելագործման և այլն, ավելի է արտադրում փոխանակության համար և պահում է մեկից ավելի աշակերտներ։ Համքարական կանոնները, նոր հարաբերությունն

են ստեղծում վարպետի և իւր ձեռքի տակ գտնվող բանվորների (աշակերտներ—քարգահներ) մեջ։

Քարգահները և աշակերտները, ըստ համքարական կանոնների, իրավունք չունեն, առանց վորոշ ձեռականութիւնների և դժվարութիւնների, վարպետ դառնալ և նրա իրավունքներն ունենալ։ Վարպետը այժմ, համքարական կարգերում, վորոշ իրավունքներ ունի, վորոնց հասնել դժվար է։ Վորպեսզի աշակերտը վարպետ դառնար անհրաժեշտ եր, վոր նա ձրի աշխատեր՝ մի քանի տարի՝ ապա քարգահի քննութիւն տար։ Քարգեահն ել, իր հերթին պիտի մի քանի տարի վարձով աշխատեր, ապա վարպետութեան համար քննութիւն տար, վորից հետո նոր իրավունք կունենար մտնելու համքարների ընտանիքի մեջ և անկախ գործ անել։ Քարգարների դեմ, վարպետ դառնալու համար, այսքան դժվարութիւններ եին կանգնեցնում նրա համար, վորպեսզի վարպետների թիվը չափազանց շատ չմեծանա և մրցումը ծայրահեղ չդառնա։ Վարպետների այդ մրցման դեմ կռվելու համար է, վոր համքարների կանոնադրութեանը արգելում է իւրաքանչյուր վարպետի, վորոշ քանակից ավելի քարգահներ և աշակերտներ պահելու։ Արհեստավորը այդ օրենքով, հնարավորութիւն չի ունենում իր գործը ընդարձակելու և մրցման միջոցով ուրիշ իր նմաններին շահագործելու։

Բացի այդ, բանվորական օրվա երկարութիւնը բոլոր համքարների համար, հավասար եր։ Եթե վորոշում եր, վոր 10 ժամ պետք է աշխատել օրվա մեջ, այդ դեպքում վոչ մի վարպետ իրավունք չուներ ավել աշխատել և աշխատեցնել իր բանվորներին։

Համքարական կանոնադրութիւնները վորոշում եին, նոյնպես թե բանվորներին վորքան սոճիկ պետք է տալ, թե արտադրված ապրանքը ինչ վորակի պետք է լինի, վոր թույլատրվի բազարում ծախել և այլն և այլն։

Եվ ինչպես ասեցինք, այդ բոլոր կանոնները պարտադիր եին, բոլոր վարպետների համար, և նպատակ ունեին իրար մեջ ծագելիք մրցման առաջը առնելու։

Իրավունք չունենալով մեծաքանակ բանվորներ պահելու, և իր սպրուստը ավելի լավացնելու, վարպետը ստիպված է իր աշխատանքի ուժից օգտվել, այսինքն ինքն ել աշխատել իր բանվորների հետ հավասար։ Այս է պատճառը, վոր համքարական շրջանում վարպետի և իր բանվորների հարաբերութիւնները ընկերական եին և ընտանեական։

Ապագայում երբ համքարական շրջանը փոխվում է մանուֆակտուրային շրջանի, այսինքն երբ հնարավորութիւն է ստեղծվում արհեստանոցները ընդարձակելու, և բանվորների թիվը բազմացնելու, արհեստավորի ձեռքից արհեստանոցը կամ ձեռնարկութիւնը անցնում է վաճառական-արդիւնաբերողի ձեռքը, այն ժամանակ արհեստանոցի տերը ինքը անմիջապես չի աշխատում, այլ նրա նպատակն եր վարձու բանվորներին շահագործելու միջոցով հարստութիւն կուտակել։

Այդ ժամանակ արդեն մի ուրշ շրջան է սկսվում։

10- Ր Դ Դ Ա Ս

Կապիտալիզմ. մասնավոր սեփականութիւն ի հաշիվ արդիւնաբերութեան։ Դասակարգերի բաժանումն—կապիտալիստների եվ բանվորների դասակարգ.—

Ինչքան վոր միջնադարի հասարակութիւնը հարստանում է տնտեսապես, այնքան ել շուկայում մանր արհեստանոցների արտադրութեան (պատրաստած ապրանքների) պահանջն մեծանում է։ Մանր արհեստանոցները սկսում են կամաց-կամաց մեծանալ և վերածվել մեծ արհեստանոցների, բայց ի՛հարկե բոլոր արհեստանոցները չեն կարողանում պահպանել իրենց կացութիւնը։ Արհեստանոցների միջև առաջանում է մրցութիւն։ Դիմանում են այն արհեստանոցները, վորոնք ավելի եժան կարող եին ծախել իրենց արտադրութիւնը, եժան ծախելու համար հարկավոր եր ունենալ նաև ավելի զարգած գործիքներ և մեծ արհեստանոցներ, վորտեղ քիչ ծախսի և կարճ ժամանակի ընթացքում կարողանային ստանալ լավ տեսակի և շատ ապրանքներ։

Կամաց-կամաց հալթում եին հենց այդ պայմաններին համապատասխանող արհեստանոցները։ Փոքրիկ արհեստանոցները չեն կարողանալ շուկային տալ եժան գնով ապրանքներ, վորովհետև նրանց փոքրիկ միջոցները չեին թույլ տալիս ունենալու ավելի զարգացած գործիքներ, և երկրորդը, վոր փոքրիկ արհեստանոցի ծախսերը, համեմատած նրա արտադրութեան հետ, ավելի շատ են և այդպիսով թանգացնում են նրա արտադրութիւնը։

Այսպիսով փոքրիկ արհեստանոցները մրցութեան շրջանում տեղի են տալիս մեծ արհեստանոցներին։ Փոքր արհեստանոցների տերերը փակելով իրենց արհեստանոցները ստիպված են լինում մտնել մեծ արհեստանոցները իբրև արհեստավորներ—բանվորներ։ Այսպիսով մեծ արհեստանոցներում հավաքվում են բոլոր սնանկացած արհեստավոր բանվորները, գիւղերից քաղաք հավաքված հողազուրկ գիւղացիները և զարկ տալիս արհեստանոցների զարգացման։ Ահա այդ մեծ արհեստանոցներն են, վորոնք սկիզբ են կազմում ներկայ կապիտալիստական—գործարանային կեանքին։

Այս գործարաններում արհեստավորի հասարակ գործիքին արդեն փոխարինում է մեքենան։ Մեքենան մեծ փոփոխություն է մտցնում գործարանի արդիւնաբերության մեջ։ Արդեն մի քանի տասնեակ բանվորների գործը կարող է արտադրել մի մեքենա, արտադրությունը շատ հեշտանում է, տնտեսությունը խոշոր ու ահռելի քայլերով է սկսում առաջ գնալ ու հարստանալ։

Կամաց-կամաց գործարանի տիրոջ և բանվորների մեջ եղած տարբերությունը մեծանում է։ Այլ ևս կարիք չկա, վոր արհեստանոցի տերը ինքը կառավարե արհեստանոցի աշխատանքները։ Այդ աշխատանքը անցնում է մի երկրորդ անձի—դա վարձու կառավարիչն է։ Գործարանի կամ արհեստանոցի տերը կարող է նույնիսկ հեռու մի ուրիշ քաղաքում իր գործարանից ստացված արդիւնքներով, ճոխ կեանք անցկացնել։ Ինչքան մեծանում է գործարանը այնքան էլ գործարանատիրոջ և բանվորների միջև եղած վիհը մեծանում է. կազմվում են երկու դասակարգեր—իրենց շահերով իրար թշնամի, մեկը աշխատում է շատ շահագործել քիչ վճարել, իսկ միւսը, աշխատում է չ'շահագործվել և ստանալ իր իսկական աշխատավարձը։

Ահա այս եղանակով առաջ են գալիս մանր արհեստանոցներից մեծ գործարաններ և երկու իրար շահերով թշնամի դասակարգեր՝ բանվորների և բուրժուաների (նախնական արհեստանոցների, տների և ապա գործարանատերերի) դասակարգերը։

11- Ր Դ Դ Ա Ս

Դասակարգային կռիվ։ Մասայական արդիւնաբերություն. արդիւնաբերական քաոս եվ ճգնաժամ.—

Արդեն ասացինք, վոր ինչքան զարգանում և մեծանում էին արհեստանոց գործարանները, այնքան ավելի էր մեծանում բանվորների և բուրժուաների մեջ եղած շահերի հակամարտությունը։

Կամաց-կամաց բանվոր դասակարգի մեջ զարգանում է դասակարգային գիտակցությունը։ Գործարանների մեծանալը իր հերթին գալիս է ավելի խորացնելու դասակարգային գիտակցությունը։

Հազարավոր բանվորներ, վորոնք աշխատում են մի գործարանում, սովորում են միասին արդիւնաբերելու, ըմբռնում են միասին տարած աշխատանքի օգուտները ու նրանց մեջ զարգանում է մասայական արդիւնաբերության հասկացողությունները։

Գործարանում չի երևում գործարանի տերը, բոլորը միասին աշխատում և ստեղծում են բարիքներ, բայց այդ բարիքները դառնում է ուրիշների՝ ինչ վոր ցոփ կեանք վարողների

սեփականությունը, վորոնք իրենց ուզածի նման վարվում են այդ բարիքների հետ։ Իրեն, բանվորին էլ ֆիզիկական ծանր աշխատանքներից հետո, վճարում էին այնքան, վոր միայն քաղցից չմեռնի ու կարողանա շարունակել աշխատանքը։ Այն ժամանակները բանվորները նկուղներում և խոնավ սենեակներում մի կերպ քարշ էին տալիս իրենց կեանքը. այդ ժամանակ շքեղ շինությունների մեջ ճոխ ու փարթամ կեանք էին վարում գործարանատերերը, վատնելով բանվորների վաստակը. բանվորը աշխատելով գործարանում 10-12 ժամ, հում նիւթից ստեղծում է ապրանքներ, վորոնք շուկա պետք է հանվեն վորոշ գնով ծախելու համար։ Բանվորը այդպիսով 10-12 ժամվա ընթացքում ստանում է վորոշ արժեք, վորի վրա նա կորցնում է վորոշ քանակությամբ եներգիա։ Նա պետք է ստանա 10-12 ժամվա ստեղծած արժեքը, վորպեսզի վերականգնե իր կորցրած եներգիան։ Բայց գործարանատերը վերցնում է նրա ստեղծած 10-12 ժամվա արժեքից 6 ժամվանը իրեն, իսկ 6 ժամվանը տալիս բանվորին։

Այդ 6 ժամվա աշխատանքի վճարն էլ եթե տալիս են, վոչ թե մարդասիրությունից դրդված, այլ ընդհակառակն նրա համար, վորպեսզի այդ բանվորը քաղցից չմեռնի և միւս օրն էլ կարողանա տալ իր գործարանատիրոջը 6 ժամ ավելորդ աշխատանք։ Բանվորը այդպիսով դառնում է մի կթի կով, վորին կերակրում են միայն կթելու համար։ Ահա այսպես է վոր կապիտալիստները ստեղծում են անագին հարստություն։

Բանվորների խղճուկ վիճակը ստիպում է նրանց կռվել այդ տեսակ կարգերի օրենքների դեմ, այս կռիվն է վոր կոչվում է դասակարգային կռիվ։ Բանվոր դասակարգը, իր դասակարգային կռվով, աշխատում է ազատել իր աշխատանքը հափշտակելուց, տեր դառնալ իր աշխատավարձին—կրճատել աշխատանքի ժամերը, բարձրացնել աշխատավարձը։ Այդ բանին դիմադրում է կապիտալիստը, նա ամեն կերպ աշխատում է ճնշել ու վոչնչացնել ամեն մի այդպիսի շարժում կամ ցանկություն։ Բանվորները դիմում են գործադուլի, կապիտալիստները դիմում են բռնի ուժի, այսպիսով քանի գնում ավելի ու ավելի բորբոքվում է դասակարգային կռիվը, այդ երկու դասակարգերի հակամարտությունը։

Այժմ անցնենք զարգացող կապիտալիստական հասարակարգի և տեսնենք արդեոք նա ինչպես է զարգանում և ինչ արգելքներ կան նրա զարգացման առաջ։ Այն մրցումը, վոր մենք տեսանք արհեստանոցների զարգացման ժամանակ, այդ

նույն մրցումն շարունակվում է և այժմ կապիտալիստական -գործարանային շրջանում։

Ամեն մի գործարան աշխատում է հնարավոր եղածին չափ։ Ժան ձեռք բերել հում նիւթեր, որը կարողանա նաև ժամ ծախել շուկայում իր ապրանքը։

Այստեղ նույնպես այն գործարաններին է հաջողվում ժան ապրանք արտադրել, որոնք կատարելագործված մեքենաներ ունեն, որտեղ քիչ աշխատանք և քիչ ծախս գործադրելով ստանում են շատ ապրանք։ Մրցութիւնը այստեղ նույնպես տանում է մանր գործարաններին դեպի վոչնչացումն, ամբողջ արդիւնաբերութիւնը կենտրոնանում է հսկա ֆաբրիկաներում և քանի գնում՝ փոքրանում է հարուստ կապիտալիստների թիվը, բայց նրանց հարստութիւնը ավելի մեծանում է։

Կապիտալիստական գործարանները, առանց հաշվի առնելու հասարակութեան կարիքները, անընդհատ արտադրում են այս կամ այն ապրանքը։ Այստեղ միմիայն ի նկատի ունեն շուկան, արդեոք շուկայում նա ծախվում է թե չէ։ Մի որևէ գործարան այլ ևս չի արտադրում միայն իւր երկրի համար։ Նա այնքան է մեծացնում իւր արդիւնաբերութիւնը, որ արտադրում է արդեն միջազգային շուկայի համար։ Մի քանի տասնեակ կոշկի գործարաններ սկսում են առանց կարիքների հաշվեառութեան անընդհատ արտադրել։ Մի գեղեցիկ օր պարզվում է, որ այդ գործարանները այնքան կոշիկ են արտադրել, որ հասարակութեան կարիքների համար բավական են մի քանի տարի։ Թե այդ երկրի և թե ուրիշ երկրների շուկաներում այլևս չի ծախվում այդ կոշիկները. նրանք չափից դուրս շատ են, գնողներ չկան։ Այս երևույթը հետևանք է այն բանին, որ կապիտալիստական հասարակակարգում կարիքների համեմատ չեն արտադրում, այլ արտադրում են այնքան, ինչքան որ հնարավորութիւն ունի այս կամ այն գործարանը։ Այս երևույթը կոչվում է արդիւնաբերական աճարխիա։

Շատ արտադրած կոշիկների չծախվելը անդրադառնում է կոշիկ պատրաստող գործարանի վրա։ Այդ գործարանը այլևս հնարավորութիւն չունի կոշիկ պատրաստելու, տերը ստիպված է իր գործարանը փակել և դուրս նետել բանվորներին փողոց։ Բայց գործը միայն կոշկի գործարանի փակմամբ չի վերջանում. բանից պարզվում է, որ կոշիկ պատրաստող գործարանը կաշին գնելիս է եղել կաշի պատրաստող գործարանից։ Կոշկի գործարանի փակմամբ պետք է նաև փակվի կաշվի գործարանը, որովհետև այլևս կոշկի գործարանը կաշի գնելու կարիք չունի։

այսպիսով գերարտադրութիւնից (անհաչիվ շատ արտադրելուց) իրար հետևից փակվում են մի շարք գործարաններ ու փողոց նետվում ահագին քանակութեամբ անգործ բանվորներ։ Սա արդիւնաբերական ճգնաժամն է. այս երևույթը կապիտալիստական կարգերում մի պատահական երևույթ չի, այլ պարբերաբար կրկնվող երևույթ, որ հարվածելու է կապիտալիստական հասարակակարգը ու դժվարացնելու նրա զարգացումն։

Այդ ճգնաժամը իհարկե շատ երկար չի տևում։ Գերարտադրած ապրանքը կամաց-կամաց շուկայում սպառվում է, նորից գործի են անցնում կանգ արած գործարանները և նոր ավելի ուժեղ կերպով շարունակում իրենց արդիւնաբերութիւնը, ճգնաժամին նորից հետևում է արդիւնաբերութեան ծաղկումն, մինչև որ նորից առաջ գա ճգնաժամ և այդպես շարունակ։ Ճգնաժամից հետո թույլ գործարանները այլևս չեն կարողանում բացվել, նրանք սնանկանում են և ստիպված են լինում լիկվիդացիայի ենթարկել գործը։ Գործարանի ամբողջ հարստութիւնը մեքենաներով անցնում է ավելի ուժեղ և մեծ գործարանատերերի ձեռքը, որոնք ճգնաժամի ժամանակ կարողացել են դիմանալ շնորհիվ իրենց մեծ միջոցների։ Ճգնաժամը նույնպես գալիս է նպաստելու խոշոր գործարանների զարգացմանը և վոչնչացնելու մանր գործարանները ու արդիւնաբերութիւնները։

Այսպիսով մի կողմից զարգացող դասակարգային կռիվը, միւս կողմից արդիւնաբերութեան քաոսը և արդիւնաբերութեան ճգնաժամերը դժվարացնումեն կապիտալիստական հասարակարգի զարգացումն, և նույն իսկ մեծ հեղեղվածներ են առաջացնում նրա մեջ, որը ինչպես հետագայում կտեսնենք պատճառ է դառնում կապիտալիստական հասարակակարգի կործանման։

12- Ր Դ Դ Ա Ս

Պետութիւն եվ ժամանակակից հասարակակարգ.—

Պետութիւնը—դա տիրող դասակարգի գործերը կառավարող կոմիտեն է,—ասել է մեր մեծ ուսուցիչ Կարլ Մարքսը։

Եվ իսկապես։

Այն ժամանակից, երբ մարդկային պատմութեան մեջ առաջացան դասակարգային անհավասարութիւններ և մասնավոր սեփականութիւն, այդ ժամանակից տիրող դասակարգերը կարիք զգացին մի առանձին օրգանի, որը պետք է իր վրա վերցներ շահագործվողների ընդդիմութիւնը ճնշելու գործը։

Մասնավոր մարդկի, հարստութիւն ձեռք է բերում այն ժամանակ, երբ աշխատանքի բաժանում է առաջանում մարդկանց մեջ, առաջ է գալիս մասնավոր սեփականութիւն եվ ի հետևանք

այդ բոլորի, երկրում արտադրված բարիքները անհավասար են բաշխվում։ Եվ ահա պետությունը ստեղծվում է այդ մասնավոր սեփականությունը և անհավասար բաշխումը պաշտպանելու համար։

Հին հռոմեական պետությունը ազնվապետական էր։ Այնտեղ իշխանության գլուխը կանգնած էին ստրկատեր ազնվականներ, (պատրիկներ) որոնք երկրի հարստության մեծ մասը իրենց ձեռքն էին կենտրոնացրել։ Նրանք այդ հարստությունը ձեռք էին բերել ստրկանալով ժողովրդի հացած մասերին։

Ժողովրդական մասսաները, որ զուրկ էին սեփականությունից, արտադրության բաշխման ընթացքում ամենից քիչ մասն էին ստանում։ Եթե նրանք շարժում անեին մասնավոր սեփականությունը վերացնելու բաշխումը հավասարեցնելու, պետությունը իր զորքի, պոլիցիայի և չինովնիկների միջոցով կճնշեր այդ շարժումը։

Նույն և ֆեոդալիզմի ժամանակ։ Պետությունը կոչվում և ֆեոդալական։ Ֆեոդալները ձեռք էին բերել մեծամեծ կալվածներ և հարստություններ, գիլդացիներին աշխատեցնում էին վորպես ճորտի։ Պարզ էր, որ այս մեծ անհավասարությունները պաշտպանելու համար ֆեոդալներին հարկավոր էր ամուր բռունցք։ Եվ այդ բռունցքը հանդիսանում էր ֆեոդալական պետությունը, որը ուներ իր ձեռքի տակ զորք, վոստիկանություն, հոգևորականության աջակցությունը կայլն կայլն։

Ժամանակակից հասարակարգը կոչվում է կապիտալիստական հասարակակարգ. թնչու։ Վորովհետև կապիտալիստները, վոչ միայն երկրի տնտեսական ույժն են իրենց ձեռքում կենտրոնացրել, այլ նաև քաղաքական ույժը։

Պետական իշխանությունը, գիտությունը, գրականությունը, երկրի ընդհանուր բախտի տնորինումը, վերջապես երկրի ամբողջ հարստությունը—գտնվում և նրանց ձեռքը։ Բուրժվայական գիտնականներ, հրապարակախոսներ, փաստաբաններ և ուրիշ ,,շատախելոք'' մարդիկ ամեն կերպ աշխատում են բոլորին հավատացնել—թեև իրանք էլ չեն հավատում, որ բուրժվայական դեմոկրատական հանրապետության մեջ թե հարուստը և թե աղքատը հավասար իրավունքներ ունեն,—որ բոլոր մարդիկ վայելում են կատարեալ ազատություն, և որ իշխանության գլուխը կանգնած և վոչ թե միայն կապիտալիստների դասակարգը, այլ ամբողջ ժողովուրդը, հանձինս իւր կողմից ընտրված պարլամենտի։

Բուրժվաների ծառաները (փաստաբաններ, հոգևորականներ, հրապարակախոսներ և այլն, այդպիսի սատեր հնարում են նրա համար, որ բանվոր դասակարգը տիրող կարգերից չդժգոհի և չմտածի այդ կարգերը կործանելու մասին։ Բայց, ով որ ուշի ուշով զննում է բուրժվայական հասարակակարգը, ով ամենօրեա փաստերից և հանում իր եզրակացությունը և վոչ դեղեցիկ խոսքերից, նա տեսնում է բոլորովին հակառակը։

Աշխարհի ամենադեմոկրատական հանրապետությունների մեջն իսկ, բանվոր-դասակարգը ճնշվում է, իսկ իշխանությունը գլուխը կանգնած է բուրժվազիան։ Ճիշտ է, ձևական կերպով բանվորներին նույնպես թույլ է տրվում ներկայացնելու ընտրություններին մասնակցելու։ Ընտրությունները կատարվում են, բայց պարլամենտի անդամները ընտրվում են մեծագույն տոկոսով կապիտալիստներ կամ նրանց ծառայություն տվող ինժիներներ, փաստաբաններ, զավոդների կառավարիչներ կայլն կայլն։ Բանվորների թիվը երկրում շատ ավելի մեծ է, նրանց պատգամավորների թիվը պարլամենտում՝ շատ քիչ. բուրժվաների թիվը երկրում շատ քիչ է, իսկ նրանց պատգամավորների թիվը՝ շատ մեծ։ Բայց ինչպես և պատահում այդ։ Մենք գիտենք որ հարստությունը կապիտալիստների ձեռքն է։ Նրանք իրենց փողերի միջոցով լրագրներ, գրքեր են հրատարակում և համոզում են բանվորներին իրենց ձայն տալ։ Բանվորը իր աղքատության շնորհիվ ուսում չե առել, իր շահերը դեռ լավ չի գիտակցում և մոլորվելով, շատ անգամ իր թշնամիներին-կապիտալիստներին ձայն և տալիս։ Կապիտալիստները ընտրությունների ժամանակ կաշառում են տգետ գիլդացիներին, քաղաքի մանր բուրժվական տարրերին և իրենց կողմը գրավում։ Բուրժվաները օգտագործում են ժողովրդի կրոնական նախապաշարումները և հոգևորականության քարոզների միջոցով, նույնպես ժողովրդական տգետ մասսաներին իրենց կողմը գրավում։ Երբ այս բոլոր միջոցներն էլ չոգնեն, և բանվորների գիտակցության շնորհիվ, նրանք զգան իրանց մոտակա պարտությունը, դրա համար խոմ նրանք ունին իրենց ձեռքի տակ պետական իշխանությունը, զորքը, վոստիկանությունը կայլն։ Նրանք ընտրություններից առաջ, զանազան պատճառներ մեջտեղ բերելով, փակում են բանվորական առանց այն էլ աղքատիկ թերթերը, բանտարկել տալիս բանվորների առաջնորդներին և նման հազար ու մի միջոցների դիմում։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ ընտրողական ազատ իրավունք, „դեմոկրատական" հանրապետություն կայլն, կապիտալիստական հասարակակարգում, բանվորների աչքը փակելու

համար հնարված գեղեցիկ խոսքեր են, և ամբողջապես հեռու իրականութիւնից։ Պինդ պահելով իշխանութիւնը իւր ձեռքին, կապիտալիստների դասակարգը աշխատում է ամեն բան ստեղծել «ըստ պատկերի իւրում»(իւր պատկերի նման)։ Դպրոցը, նկարչեցին, գեղարվեստը, գրականութիւնը, բոլորն էլ ծառայում են բուրժվազիայի շահերին, բոլորն էլ դրված են այնպիսի հիմքերի վրա, որոնցից բուրժվազիան է միայն օգտվում, իսկ բանվոր դասակարգը՝ երբեք։

Նրանց ընդհանուր նպատակն է բուրժվազիայի իշխանութիւնը ամրապնդել և հաստատուն պահել։ Դպրոցում մանուկներին սովորեցնում ու հավատացնում են, որ մանավոր սեփականութիւնը սուրբ է, նրա դեմ չի կարելի կռվել, որ հարուստները իրենց հարստութիւնը ձեռք են բերում միայն իրենց աշխատանքի միջոցով և միայն ծույլ մարդիկն են աղքատանում, ինչպիսիքն են բանվորները։

Եկեղեցին քարոզում է միավար հավատացեալներին, որ տիրող կարգերը երկնքից են սահմանված և որ այդ կարգերի դեմ կռվել-նշանակում է դեմ գնալ աստվածային օրենքներին։

Բարձրագոյն կրթութիւն ստանում են մեծ մասամբ կապիտալիստների որդիները, որոնք սկսում են „գիտական փաստերով ապացուցել“, որ բուրժվայական կարգերը ամենալավ կարգերն են, և որ սոցիալիստների և կոմմունիստների ձգտումը այդ հասարակակարգը տապալելու և սոցիալիստական հասարակակարգ ստեղծելու մասին-անիրագործելի երազներ են։

Վերև հիշված և ուրիշ բազմաթիվ միջոցներով, կապիտալիստների դասակարգը աշխատում է իւր իշխանութեան ժամանակաշրջանը երկարացնել և պրոլետարիատի կռվի թափը թուլացնել։

13- Ր Դ Դ Ա Ս

Մի քիչ վերև մենք տեսանք, որ կապիտալիստական հասարակարգը ունի երկու գլխավոր հակասութիւններ. նախ՝ որ նա անկազմակերպ արտադրութիւն է և երկրորդ որ նա բաղկացած է երկու թշնամի դասակարգերից։ Մենք նույնպես տեսանք որ մրցումը կենտրոնացնում է կապիտալը փոքրաթիվ կապիտալիստների ձեռքը։ Որքան կապիտալը կենտրոնանում է, այնքան էլ շատանում են բանվորները, այնքան էլ կապիտալիստների և բանվորների մեջ եղած վեճը ավելի ու ավելի մեծանում է։ Ճիշտ է, կապիտալիստի զարգացմամբ, մինչև 20-րդ դարը, բանվորների ոռճիկը սկսեց մի փոքր ավելանալ, բայց անհավասար չափերով սկսեց ավելանալ կապիտալիստների շահերը, ա-

վելի մեծացավ բանվորների ստացածի և կապիտալիզմի շահածի տարբերութիւնը։ Ահա հենց այս բանից երևում է, որ բանվորները ու կապիտալիստները վոչ թե իրար ժոռենում են սոցեալապես, այլ ընդհակառակն նրանց մեջ եղած դասակարգային կռվի թափը քանի գնում մեծանում է։ Կապիտալիստական հասարակակարգը իւր մեջն իսկ ունի պրոլետարիատի վերջնական հաղթանակի պայմանները։ Ինչու. որովհետև կապիտալիզմի զարգացումն կնշանակի բանվոր դարձնել հասարակութեան ամենալայն խավերը։ Բանվորութիւնը կապիտալիստի ամեն մի քայլից օրստօրե մեծանում է քանակով, մեծանում են գործարանները ու նրանց մեջ աշխատող բանվորների թիվը, այդ գործարաններում սկսվում է կռվել բանվորների դասակարգային գիտակցութիւնն ու դեպի կապիտալիստական հասարակակարգն ունեցած ատելութիւնը։ Վաղ թե ուշ այդ բանվորները պետք է ընդհարվեն կապիտալիստների հետ, դուրս քշեն նրանց իշխանութիւնից և ստեղծեն իրենց իշխանութիւնը։ Այսպիսով կապիտալիզմի զարգացումը թվով ու վորակով մեծացնում է բանվոր դասակարգը, ուժեղացնում նրա դասակարգային գիտակցութիւնը, որը առաջնորդում է նրան դեպի կոմունիստական հեղափոխութիւնը։

Կապիտալիզմը այսպիսով իւր համար գերեզման է փորում այն հասարակ պատճառով, որ նա իւր գերեզմանափորների-բանվորների թիվը մեծացնում է և կազմակերպում։ Բայց կապիտալիզմի ջժբախտութիւնը հենց նրանումն է, որ նա վոչ թե միայն բազմացնում է իւր գերեզմանափորների թիվը, այլ և հող է պատրաստում ապագա նոր հասարակական արդիւնաբերութեան և կոմմունիստական տնտեսութեան։ Ինչու։ Որովհետև նա զարգանալով կենտրոնացնում և կուտակում է կապիտալը, մեծացնում է տնտեսութիւնը հսկա ու ահագին գործարաններում, այնպես որ երբեմն մի քանի տասնեակ գործարաններ կարողանում են երկրի ամբողջ շուկայի ապրանքներն արտադրել։

Այդ հսկա գործարաններում կողք-կողքի աշխատում են հազարավոր բանվորներ, որոնք երկար տարիներ միասին աշխատելով, նրանց մեջ զարգանում է կոլլեկտիվ (միասին) աշխատանքի հասկացողութիւնը և նրա գրական կողմերը։ Բանվորները ընբռնում են, որ հազարավոր բանվորների կոլլեկտիվ աշխատանքը միացած մեքենաների աշխատանքին, տալիս է այն բոլոր հարստութիւնները ու անհրաժեշտ նիւթերը, որոնցով և գոյութիւն ունի մարդկային կեանքը։

Կապիտալի արտադրութեան այսպիսի կենտրոնացումը հը-

նարավոր է դարձնում անցնելու կոմմունիստական արդիւնաբերութեան. հարկավոր է միայն հեռացնել կապիտալիստներին կազմակերպված և կենտրոնացած կապիտալի ղեկից, վերջ տալ մասնավոր սեփականութեան, հայտարարել համայնական վերցնել բանվորութեան ձեռքը ու հաստատել կոմմունիզմի հաղթանակը։

Կնշանակէ կապիտալիզմի զարգացումը վոչ միայն ստեղծում է կապիտալիզմի համար թշնամիներ, այլ և ստեղծում է տնտեսական պայմաններ կոմմունիստական հասարակարգի համար։ Կապիտալի կենտրոնացումը և կուտակումը մի վորևե երկրում կամաց-կամաց առաջ է բերում զանազան մեծ կապիտալիստների միութիւններ, վորոնք կոչվում են սինդիկատներ կամ տրեստներ։ Այդ տրեստների նպատակն է այդ երկրի ամբողջ արդիւնաբերութիւնն ու առևտուրն իւր ձեռքը վերցնել, վերացնել կոնկուրենցիան-մրցումն, վորպեսզի հնարավոր եղածին չափ շատ խուզեն ժողովրդին, հնարավոր եղածի չափ շատ շահագործեն բանվորներին։ Տրեստներն ու սինդիկատները այսպիսով վերացնում են երկրի ներսում կոնկուրենցիան-մրցումն և վորոշ չափով նաև արտադրութեան անարխիան։ Արդիւնաբերութիւնն այս շրջանում արդեն դառնում է միջազգային, մի ապրանք է արտադրում վոչ միայն իւր երկրի համար, այլ և ամբողջ միջազգային շուկայի համար. այսպիսով եթե մի երկրի արտադրութեան մեջ վերանում է մրցումն և վորոշ չափով նաև անարխիան. այդ դեռ չի նշանակում վոր միջազգային արդիւնաբերութեան մեջ նոյնն է կրկնվում։ Ընդհակառակն՝ պետութիւնների ներսից վերացնելով մրցութիւնը, նա անցնում է միջազգային շուկան, մրցումն սկսում է ավելի մեծ խմբերի-տրեստների միջև։ Տրեստները վոգողելով հենց ներքին շուկան իրենց արտադրութեամբ՝ չեն կարողանում սպառել արտադրած ապրանքները, հարկավոր են նոր շուկաներ. ուրիշ շուկաներում տիրում են ուրիշ տրեստներ, այդ շուկաները նրա մացնել շատ դժվար և, պետք է ասենք քանակութեամբ մաքս (таможна) վճարել։ Հենց ինքը մաքսը կապիտալիստական աշխարհում նպատակ ունի պաշտպանել պետական „հայրենի“ տնտեսութիւնը արտաքին աշխարհի կապիտալիստական վտանգից։

Ահա ինչու կապիտալի ներկա մրցումը նման չէ առաջվա մրցմանը. այստեղ անհրաժեշտ են արիւնահեղ պատերազմներ շուկա ձեռք բերելու համար, այլ կերպ շուկա չի կարող ձեռք բերել զարգացող կապիտալը, այլ կերպ նա կարող է սնանկանալ, քայքայվել։ Այսպիսով զարգացած տրեստների ու սինդիկատների մեջ կազմակերպված կապիտալի ապագա զարգացման և նրա մրցման համար անհրաժեշտ է պատերազմի միջոցով նոր շուկաների գրավումն։ Կապիտալիզմի այս շրջանը կոչվում է իմպերիալիզմ։

Մինչև այդ շրջանը նույնպես եղել են պատերազմներ, բայց այս պատերազմները ունին այլ նշանակութիւն, վորոնք անհրաժեշտ են կապիտալի գոյութիւնը պահպանելու համար։ Այս շրջանի պատերազմները կոչվում են իմպերիալիստական պատերազմներ, վորոնք տարբերվում են մինչև այդ եղած պատերազմներից իրենց ուժով, արիւնահեղութեամբ։ Այստեղ ինքը կապիտալը ցույց է տալիս անմիջական մասնակցութիւն այդ պատերազմներին։

Ահա ինչու այդ պատերազմները վարելու համար անհրաժեշտ է ավելի լավ զինվել ու ունենալ մեծ զինված ուժ, ահա ինչու իմպերիալիստական կապիտալիստական պետութիւնները սկսում են ավելի զինվել, պետութիւնների զինական ուժը օրըստ օրե քանի գնում մեծանում է։ Այժմ կապիտալի ուժը կապ ունի նրա զինական ուժերի հետ. եթե նա զինված չէ և չի կարող իրեն պաշտպանել, նրան կը վոչնչացնեն ուրիշ ավելի զինված կապիտալիստական իմպերիալիստական պետութիւններ։ Ամեն մի պետութիւն իրեն հերթին աշխատում է զինվել ու հետ չընկնել միւս պետութեան զինված ուժերից։ Իմպերիալիստական կապիտալի այս զինումն կոչվում է միլիտարիզմ։ XX-րդ դարի սկզբներում այս դրութեան մեջ էր գտնվում ամբողջ իմպերիալիստական Եվրոպան։ Պետութիւնների ներսում տրեստներում կազմակերպված կապիտալը հասնելով իւր զարգացման ծայր աստիճանին, ճգնում էր դուրս գալ ստեղծված երկաթեա օղակներից։ Բոլորը անընդհատ զինվում էին, ամեն մեկը իւր զինական պատրաստութեամբ աշխատում էր գերազանցել միւսին։ Ամեն մեկը աշխատում էր ավելի ուժեղանալ հարվածելու և կործանելու միւսին, Այլ ելք չկար, կապիտալի զարգացումն այդ էր պահանջում։ Ահա այս տենդագին անընդհատ զինման շրջանն էր ապրում 1913—1914 թիվը. Եվրոպայում նրանք իրար հետ մեկ օր պիտի ընդհատվեին, ինչքան շուտ այնքան լավ, այնքան աղետը շուտ կվերջանար։ Ահա այս դրութեան գագաթնակետին էր հասել իմպերիալիստական- մինչև եղունգները զինված—Եվրոպական կապիտալը 1914 թվի իմպերիալիստական պատերազմի սկզբին։ Այդ մասին արդեն մի ս մասում։

14 Ր Դ Դ Ա Ս

1914 թվի համաշխարհային պատերազմը եվ Երրորդ ինտերնացիոնալը.—*Եվրոպայի մեծ պետութիւնների մեջ ռազմական ուժերի օրըստորե ուժեղացումը պարզ ու ակնհայտնի կերպով*

տանում եր դեպի համաերոպական պատերազմը։ Ամբողջ երկրագունդը արդեն վաղուց մաս-մաս բաժանված եր բոլոր պետութիւնների մեջ։ Զարգացող ու արեստների—սինդիկատների մեջ միացած կապիտալը տնքում եր ստեղծված նեղ սահմաններում։ Նրան հարկավոր եր միջազգային շուկան առանց արհեստական պատնեշների։ Ամեն մի զինված կապիտալիստական պետութիւն մտածում եր ձեռք բերել միջազգային շուկան, տեր դառնալ նրան։

«Մեծ պետութիւնների» այս հափշտակիչ քաղաքականութեան հետևանքը եղավ 1914 թվի պատերազմը։ Միայն հիմարը կարող է հավատալ, վոր պատերազմի պատճառը սերբերի ձեռքով Ավստրո-Վենգրիայի թագաժառանգի սպանութեան փաստն եր, կամ թե գերմանական հարձակումն եր Բելգիայի վրա, վորը ստիպեց Ֆրանսիային դուրս գալ պաշտպանելու փոքրիկ Բելգիային և այլն և այլն։

Այս բոլորը կապիտալի ստեղծած սուտն ու կեղծիքն եր, վորպեսզի հիմարացնեն բանվորներին և գիւղացիներին ու դուրս բերեն նրանց «հայրենիքի պաշտպանութեան» «սրբազան» կովի։ Բոլոր կռվող կողմերը հայտնում էին թե մենք պաշտպանվում ենք, իսկ երբ հոկտեմբերեան հեղափոխութիւնը փշրեց Նիկոլայի դիպլոմատիայի գաղտնի պահարանը, այնտեղի փաստաթղթերից պարզվեց, վոր թե ցարը և թե Կերենսկին տանում են թալանչիական և հափշտակիչ պատերազմ՝ գրավելու Կ. Պոլիսը, Պարսկաստանը և այլն և այլն։ Նույն և պարզվեց Գերմանիայում, գերմանական հեղափոխութիւնից հետո. Գերմանիան ցանկանում եր տեր դառնալ համարեա բոլոր Ասիական և Աֆրիկական զաղութներին։ Նույն հափշտակիչ նպատակներն ունեին նաև Անգլիան, Ֆրանսիան և ուրիշները, այս բոլորը կոմունիստներին հայտնի եր հենց պատերազմի ժամանակ, բայց շատ քչերն էին հավատում նրանց. այժմ քիչ թե շատ խելքը գլխին մարդ չի կարող ասել, վոր այդ այդպես չի և աշխատի փնտրել 1914 թվի պատերազմի մեղավորին։ Այդպիսի մի մեղավոր չկա, մեղավորը ագահ ու անկուշտ աճող իմպերիալիստական կապիտալն եր, վորի վրա մենք կանգ առանք նախընթաց դասում։ 1914 թվի պատերազմն համաշխարհային պետք եր լիներ այն հասարակ պատճառով, վոր իմպերիալիստական կապիտալը դարձել եր միջազգային շուկայի կապիտալ, մի երկրի տնտեսութիւնն ուժեղ կերպով կապ ուներ մի ուրիշ երկրի տնտեսութեան հետ. եթե կռվում եր մեկը, պետք է կռվեր և միւսը։ Այսպիսով պատերազմի մեջ ձգվեցին՝ աշխարհի բոլոր մեծ պետութիւնները և մի քանի

տասնեակի հասնող մանր պետութիւնները։ Աշխարհը չեր տեսել դեռ ևս այդպիսի ահռելի բանակներ, վորոնք 1914 թվին դուրս եկան իրար դեմ մի խումբ թալանչիների ղեկավարութեամբ և 4 տարի շարունակ քանդում ու ավիրում էին երկրագունդը կապիտալի արդիւնքները շատացնելու համար։ Զորս տարի շարունակ Եվրոպայի և Ամերիկայի բոլոր մեծ ու փոքր գործարանները միայն զենք էին արտադրում պետութեան համար ու ավելի ուժեղացնում միջազգային հրդեհը։ Մի կողմից ավերվում եր երկիրը, միւս կողմից ծաղկում էին ռազմական գործին ծառայող գործարանները ու լցվում կապիտալիստների գրպանը։

Պարզ է, վոր այդ կապիտալիստները բոլորովին էլ չէին մտածում պատերազմի վերջի մասին, այլ ընդհակառակն ուզում էին հնարավոր եղածին չափ երկարացնել պատերազմը, չէ վոր պատերազմի ամբողջ ծանրութիւնը ընկնում եր բանվորների և գիւղացիների վրա (թե պատերազմի դաշտում և թե թիկունքում)։

Պատերազմը առավել ևս ուժեղացրեց բանվոր դասակարգի թշնամութիւնը դեպի կապիտալիստական հասարակութիւնը ու տիրող դասակարգը։ Մի քանի տվեալների համաձայն պատերազմի սկզբից մինչև 1917 թվը մարդկային զոհերի թիվը հասնում եր 10 միլիոնի։ Պարզ է, վոր այս ահռելի թվի 99 տոկոսը կազմում են բանվորներ և գիւղացիներ։ Բացի մարդկային զոհերից, պատերազմի համար ծախսվում եր անհերևակայելի նիւթական միջոցներ։ Մինչև 1918 թվի հունվարի 1-ը, բոլոր պատերազմներին պետութիւնները ծախսել էին 586 միլիարդ ռուբլի վոսկով։ Պարզ եր, վոր այս գումարը դուրս եր գալիս նորից աշխատավոր ժողովրդի գրպանից, տուրքերի և պատերազմների թալանի միջոցով։

Այս ծախսերից ավելի ևս աղքատանում էին այն երկիրները, վորոնք առանց այն էլ աղքատ էին։ Ռուսաստանը պատերազմի 3-րդ տարին արդեն հիւծված ու քայքայված մի երկիր եր դարձել, նա այլևս շարունակել պատերազմը չեր կարող։ Ժողովրդական մասսաները դժգոհ էին պատերազմից ու պահանջում էին վերջ տալ այդ սպանդանոցին։ Սովից տնքում եր ամբողջ գիւղացիութիւնը և բանվորութիւնը։ Ավելի լավ պայմաններում չէին Եվրոպայի ավելի հարուստ երկրները, նույն դրութեան մեջ էին՝ Գերմանիան, Ավստրիան, Ֆրանսիան, Իտալիան և ուրիշները։

Բայց Ռուսաստանի դրութիւնը ավելի կրիտիկական եր, հեռու էին նրանից իւր „դաշնակիցները“, ուստի առաջինը նա ընկավ պատերազմի դաշտում,—1917 թվի փետրվար ամսին։

Ռուսաստանի տանջված ու քայքայված բանվորներն ու գիւղացիները, ատելութեամբ լցված դեպի ցարական կառավարութիւնը և դեպի այդ թալանչիական պատերազմը, կործանեցին Ռուսական ցարիզմը ու բարձրացրին հեղափոխութեան կարմիր դրոշը ամբողջ Ռուսաստանում։

Փետրվարեան հեղափոխութեան նշանաբանն եր՝ կորչի աշխարհավեր պատերազմը։ Այդ նշանաբանը մոռացան փետրվարեան հեղափոխութիւնից հետո իշխանութեան գլուխ անցած եսերները ու մենշեիկները։ Նրանք ցանկացան շարունակել միջազգային պատերազմը, բռնաբարել ռուս ժողովրդի կամքը ու դողուրդը այս անգամ ել երես դարձրեց այդ կեղծ պաշտպան եսերներից և մենշեիկներից և կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ հոկտեմբեր ամսին դուրս քշեց իշխանութիւնից եսերներին և մենշեիկներին ու ամբողջ լայնածավալ Ռուսաստանում իշխանութիւնը հանձնեց բանվորների և գիւղացիների պատգամավորներից կազմված խորհրդներին։ Խորհրդային իշխանութիւնը կարողացավ, թեև թանդ գնով, կարճ ժամանակում հաշտութիւն կնքել Գերմանիայի հետ և այսպիսով ռուս աշխատավոր ժողովրդին դուրս հանեց 1914 թվից սկսված աշխարհավեր պատերազմի գրկից։

Փետրվարեան և հոկտեմբերեան հեղափոխութիւնը իւր խորազդեցութիւնը պետք է ունենար նաև Եվրոպայի նույնպես տանջված ու քայքայված բանվորութեան վրա։ Այդ երկրների բանվորները պետք է համակրանքով վերաբերվեին այդ երկու հեղափոխութեան և նույն իսկ այդ կատարեին իրենց երկրներում։ Այս բանը լավ գիտակցելով՝ Ռուսաստանի հեղափոխութեան առաջնորդ կոմունիստական կուսակցութիւնը 1918 թվին սկսեց կազմակերպել և ուժեղացնել, դեռ ևս 1914 թվից սկիզբ առած 3-րդ ինտերնացիոնալը։ 3 րդ ինտերնացիոնալի նպատակն եր միացնել ամբողջ աշխարհի հեղափոխական բանվորներին ու կուսակցութիւններին հեղափոխական դրոշակի տակ ու մի ուժեղ հարվածով տապալել այն հասարակակարգը, վոր ստեղծեց միջազգային պատերազմը իւր մեծ արհավիրքներով ու սարսափներով։ Ռուսաստանի աշխատավոր ժողովուրդը կապիտալիզմի առաջին հարվածողն եղավ։ Նա խորտակեց իւր սեփական երկրում կապիտալիստական կարգերը ու կոչ արավ ամբողջ աշխարհի բանվորներին հետևել իւր օրինակին և խորտակել ամբողջ աշխարհում կապիտալի լուծը, իշխանութիւնը հանձնել բանվորներին ու գիւղացիներին—այսինքն աշխատավորներին ու

ստեղծել աշխարհում խաղաղութիւն և հավասարութիւն։ Այս լոզունգները արագ կերպով սկսվեցին տարածվել ամբողջ Եվրոպայում, Ամերիկայում և նույն իսկ հետաքրքրեց Ասիայում։ Այնտեղ հեղափոխական բանվորները հավաքվում եին, կազմում կոմունիստական կուսակցութիւն ու այսպիսով մտնում 3-րդ կոմունիստական ինտերնացիոնալի դրոշի տակ։

1914—1918 թվի միջազգային իմպերիալիստական պատերազմի ընթացքում հեղափոխական բանվորները գիտակցեցին կապիտալիստական հասարակակարգի դեմ կռվելու անհրաժեշտութիւնը։ Նրանք սկսեցին կազմակերպվել հեղափոխական կազմակերպութիւններում կարմիր դրոշակների տակ։ Մի քանի տեղ իրենց ձեռքը վերցրին իշխանութիւնը (օրինակ՝ Ռուսաստանում, Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և այլն), մի քանի տեղ անհաջողութեան հանդիպեցին (օրինակ՝ Վենգրիայում և Գերմանիայում), բայց հեղափոխական գիտակցութեան եկած միջազգային պրոլետարիատը չհուսահատվեց, նա 3-րդ կոմ. ինտերնացիոնալի դրոշի տակ շարունակում է իւր անողոք կռիվը կապիտալի իշխանութեան դեմ, օր ըստ օրե ուժեղացնելով ու ամրացնելով իւր շարքերը նա պատրաստվում է վերջին հարվածը տալու և խորտակելու կապիտալի իշխանութիւնը ամբողջ աշխարհում։

15-Ր Դ Ա Ս

Խորհրդային իշխանութեան կոնստրուկցիան։ Բանվորական, գինվորական և գիւղացիական ներկայացուցիչների խորհուրդները իբրև բանվորական դիկտատուրա։

Խորհրդային իշխանութեան ձևը Ռուսաստանում վորոշվում է Ր. Ս. Փ. Խ. Հ. սահմանադրութիւնով (конституция)։ Այդ սահմանադրութիւնը կազմվել է վոչ թե զանազան գիտնականների և պրոֆեսորների կաբինետներում, այլ ամբողջ Ռուսաստանի աշխատավորների պատգամավորների համագումարներում, վորոնք արձանագրել են այն նվաճումները, վորոնց բանվորութիւնը ձեռք եր բերել հեղափոխական կռվում։ Խորհուրդներ կային դեռ 1905 թվին, բայց դրանք վերացան հեղափոխութեան տապալումից հետո։ Խորհուրդները հսկայական ձևեր են ընդունում 1917—18 թվականներին, հոկտեմբերեան հեղափոխութիւնից հետո. հենց այդ ժամանակ Ռուսաստանը ծածկվում է խորհուրդների ուժեղ ցանցով, ամեն մի գիւղում, ամեն մի գործարանում, ֆաբրիկայում, կազմակերպվեցին խորհուրդներ։ Ուրեմն, եթե ամբողջ խորհրդային շինարարութիւնը արդիւնք է բովանդակ բանվորութեան և աշխատավորների աշխատանքի հանձին

նրա խորհուրդների համագումարների և եթե 1918 թիվը դրավ խորհուրդների սահմանագրության հիմքերը, ապա և առաջիկայի փոփոխությունները կատարվում էին նույնպիսի ձևով, խորհուրդների համագումարների միջոցով։

Խորհրդային իշխանությունը ընտրովի է։ Ամբողջ բանվոր և գիւղացի ժողովուրդը ընտրում է նրան։ Իրանից ընտրած պատգամավորների միջոցով բանվորությունը և գիւղացիությունը կառավարում է երկիրը անսահմանափակ իրավունքներով. ընտրությանը մասնակցում են միայն բանվորները և աշխատավոր գիւղացիները, մասնակցում են նաև նրանք, որոնց աշխատանքը անհրաժեշտ է բանվոր և գիւղացի ժողովրդի համար (վարժապետ, բժիշկ, ինժեներ և այլն), եթե այս վերջինները շահագործող դասին չեն պատկանում։ Այսպիսով բանվորությունը ստեղծում է իր դիկտատուրան, ուժեղ, անողոք և կարուկ իշխանությունը։

Խորհրդային հանրապետության մեջ չկա պարլամենտ, այլ կան բանվորա-գիւղացիական խորհուրդներ։ Այստեղ ամեն մի խորհրդի անդամի կարելի է փոխել, եթե նա շեղվել և ցույց տված ուղիից, երբ նրան չեն ուղում իր նախկին ընտրողները։ Դա շատ հեշտ կարելի է անել, որովհետև ընտրությունները կատարվում են գիւղերում, գավոդներում, ֆաբրիկաներում։ Բուրժուական երկրներում այդպիսի դեպքերում հարկավոր պիտի լինի գումարել ամբողջ նահանգի կամ շրջանի ժողով, որտեղ կարելի կլինի պարլամենտի անդամին փոխել։ Ուրեմն խորհուրդը մասսաներից չի կտրվում, նա ընդհակառակը արտահայտում է նրա կամքը։ Խորհուրդները իրանք հրատարակում են օրենքներ. իրանք էլ կատարում, ուրեմն կարիք չի լինում կառավարական չինովնիկներ պահել։

Ինարկե, գիւղական խորհուրդը լուծում է գիւղական հարցերը, իսկ քաղաքինը՝ քաղաքինը։ Իսկ այն հարցերը, որոնք վերաբերվում են ամբողջ պետությանը, որոշում և խորհուրդների համագումարը, իսկ համագումարից մինչև համագումարը—Կենտրոնական Գործադիր Կոմիտեն։ Իսկ այդ համագումարում մասնակցում են բոլոր քաղաքային և գավառային խորհուրդները, ուրեմն նրանք էլ ընտրում են Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, որին և պատկանում է ամբողջ իշխանությունը։ Վերջինս ընտրում և հեռացնում է իր բանվորա-գիւղացիական կառավարությունը—ժողովրդական կոմիսարների խորհուրդը (Совнарком)։ Ուրեմն բանվորը և գիւղացին ինքն է ընտրում իր իշխանությունը։

Խորհրդային իշխանության թշնամիները մեզ մեղադրում են նրանում, որ խորհուրդներում բոլոր ազգաբնակչությունը չի մասնակցում։

Այո, ճիշտ է։ Ընտրում են միայն. քաղաքներում՝—բանվորները և ծառայողները, իսկ գիւղերում՝ միայն աղքատ, անհող, սակավահող և այնպիսի գիւղացիները, որոնք աշխատում են իրենց համար, ուրիշի աշխատանքը չեն շահագործում։ Հարուստ մարդիկ չեն կարող ընտրություններին մասնակցել։ Չեն կարող ընտրել և հին պրիստաֆները, ժանդարմները, տերտերները, սրբազանները և այլն։

Չէ՞ որ խորհրդային իշխանությունը հարուստների հետ չունի։ Նա դեռ կռիվ է անում դրանց հետ։ Իսկ խորհուրդները պրոլետարիատի ռազմական օրգաններն են, ուրեմն հասկանալի է, որ խորհուրդներում դրանք տեղ չը պիտի ունենան։

Բանվորական, գիւղացիական, կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդները միայն կարող են լինել քաղաքներում, գիւղերում, գիւղաքաղաքներում և այլն մարդաբնակ տեղերում, որոնք կազմում են տեղերում հիմնական իշխանություն, իսկ կենտրոններում (գավառամաս, գավառ, նահանգ և այլն) կազմակերպվում են խորհուրդների համագումարներ և նրանց գործադիր կոմիտեներ։ (Խորհրդային Հայաստանում կա երկու քաղաքային խորհուրդ. Երևանի և Ալեքսանդրի, և մի քանի հարիւր գիւղական խորհուրդներ)։

Գիւղական խորհուրդներից հետո գալիս է գավառամասի համագումարը և գործադիր կոմիտեն, որը ղեկավարում է գիւղական խորհուրդների աշխատանքները և հանդիսանում է իր սահմաններում բարձր իշխանություն։

Գիւղական խորհուրդները կազմվում են հետևեալ կերպով. ամեն մի 100 բնակիչ տալիս է մեկ պատգամավոր (բնակիչների հաշվի մեջ մտնում են և նրանք, որոնք ձայն չունեն)։ Իսկ այն գիւղերը, որոնք 300-ից պակաս բնակիչ ունեն՝ միանում են իրար հետ և կազմում են միացեալ խորհուրդ։ Գիւղխորհուրդը ընտրում է իր նախագահը, որը ղեկավարում է ընթացիկ աշխատանքները. գավառամասի համագումարին ուղարկվում է ամեն մի գիւղխորհրդի 10 անդամից մի պատգամավոր, իսկ այն գիւղերը, որոնք 10-ից քիչ անդամ ունեն՝ ուղարկում են մի-մի պատգամավոր։ Գավառամասի համագումարը ընտրում է իր գործադիր կոմիտեն 3—7 անդամից բաղկացած, որին և հանձնվում է գավառամասի խորհուրդների աշխատանքի ղեկավարությունը։ Ապա կազմվում է գավառային գործադիր կոմիտեն և հա-

մագումարը։ Այս համագումարը կազմվում է գիւղխորհրդների ներկայացուցիչներից, ամեն մի 2000 բնակիչ (20 անդամից) տալիս է մեկ պատգամավոր, և քաղաքի խորհուրդի ներկայացուցիչներից ամեն մի 100 ընտրող (բանվոր, ծառայող, կարմիր բանակային) տալիս է մեկ պատգամավոր։ Գավառային համագումարը և կամ նրա գործադիր կոմիտեն՝ հանդիսանում և գավառում բարձր իշխանութիւն, նորան է պատկանում գավառի խորհրդային շինարարութեան ղեկավարութիւնը։ Գավառի գործադիր կոմիտեն բաղկանում է 7—15 անդամից, ունի իր նախագահը, քարտուղարը և համապատասխան բաժիններ։

Հայաստանում գավառից հետո գալիս է կենտրոնը, իսկ Ռուսաստանում նահանգը. Համահայաստանեան խորհրդների համագումարը կազմվում է գավառային համագումարների ներկայացուցիչներից, ամեն մի 5000 բնակչից մեկը։ Համահայաստանեան համագումարից բարձր իշխանութիւն չկա Հայաստանում, նորան է պատկանում խորհրդային օրգանների ընդհանուր ղեկավարութիւնը, նա է լուծում խոշոր սկզբունքային՝ ներքին և արտաքին քաղաքականութեան վեճերը և ընտրում է իր կենտրոնական գործադիր կոմիտեն 75 անդամով։ Վերջիններս նշանակում են Հայաստանի կառավարութիւնը-Ժողկոմների խորհուրդը՝ իր նախագահով։ Կենտգործկոմը մշակում է օրենքներ և հսկում նրանց կանքի մեջ մացնելուն, իսկ ժողկոմխորհը կառավարում է։ Համառուսական խորհուրդների համագումարը կազմվում է բոլոր նահանգական քաղաքների խորհուրդներից, նահանգական խորհրդների համագումարից, և ավտոնոմ ու անկախ խորհրդային հանրապետութիւնների համագումարներից, հետևեալ հաշվով. նահանգական քաղաքային խորհրդներից՝ ամեն մի 25000 ընտրողից մի պատգամավոր, նահանգական համագումարներից՝ ամեն մի 125.000 բնակչից մի պատգամավոր։ Համառուսական համագումարին և նրա գործադիր կոմիտեին է պատկանում երկրի բարձր իշխանութիւնը, օրենքներ հրատարակելու իրավունքը, սահմանադրութեան մեջ փոփոխութիւն մացնելը և կառավարութիւն նշանակելը։

16-Ր Դ. Դ. Ա. Ս

Խորհրդային իշխանութեան ձեռնարկած ամենանշանավոր միջոցները՝ խոշոր արդիւնաբերութեան միջոցների ազգայնացում, բանվորա-գիւղացիական վերահսկողութիւն (կանտրոլ), բանկերի ազգայնացում, եկեղեցու բաժանումը պետութիւնից, միասնական աշխատանքի դպրոց, կարմիր բանակի կազմակերպում։

Խորհրդային իշխանութիւնը նպատակ ունենալով վերջ տալ

մարդկանց իրար շահագործելուն և ստեղծել սոցիալիստական կարգեր՝ իսկույն և եթ վերացրեց հողի մասնավոր սեփականութիւնը, ենթարկեց սոցիալիզացիայի և հանձնեց այդ բոլորը աշխատավոր ժողովրդին օգտագործելու ընկերական հիմունքներով. «հողը աշխատավորին»։ Անտառները, երկրի ամբողջ հարստութիւնը նմանապես կալվածատերերի շարժական և անշարժ գոյքը հայտարարվեց աշխատավորութեան սեփականութիւն։ Բանվորա-գիւղացիական իշխանութիւնը ուժը բոլոր շահագործողների վրա տարածելու համար և այդպիսիներին տնտեսապես ուժասպառ անելու համար հոգուտ բանվորների, խորհրդային իշխանութիւնը ազգայնացման ենթարկեց խոշոր արդիւնաբերութիւնը. գործարանները, ֆաբրիկաները և այլն, կազմակերպվեց բանվորական վերահսկողութիւն բանվորական կազմակերպութեան կողմից, և բանվորա-գիւղացիական բարձր արդիւնաբերական օրգան—ժողովրդական տնտեսութեան գերագույն խորհուրդը։ Հարկավոր եր ազատվել կապիտալի ճնշումից, ուստի խորհրդային իշխանութիւնը հենց սկզբի օրից հայտարարում է վոչնչացած ցարի բոլոր պարտքերը, բանվորը և գիւղացին պատասխանատու չեն թագավորի անիրավութիւնների համար, նմանապես բոլոր բանկերը հայտարարվում են բանվորա-գիւղացիական կառավարութեան սեփականութիւն։ Ահա այսպիսով տնտեսական բոլոր առավելութիւնները, վորոնք գտնվում եին հարուստների ձեռքին, անցնում են բանվորա-գիւղացիական մասսաների ձեռքը, և բուրժուազիան միանգամից դուրս է շպրտվում քաղաքական ասպարիզից։ Հարկավոր եր այդ բոլորը պահպանել ամուր. խորհրդային իշխանութիւնը շատերի համար անտանելի եր. այստեղ կամ այնտեղ հակահեղափոխական շարժումներ եին նկատվում, ուստի բանվորա-գիւղացիական մշտական կարմիր բանակի կազմակերպումը անհետաձգելի հարցերից մեկն եր։ Կարմիր բանակը կռվում է ամեն տեղ խորհրդային կարգեր ստեղծելու համար, ինչպես նաև պաշտպանում է մեր արդեն կազմակերպված խորհրդային իշխանութիւնը։ Ձեռք արտասահմանումն ել կատարվում են հեղափոխական շարժումներ։ Նրանց հարկավոր է օգնել և երբ վոր ամեն տեղ կվերջանա հեղափոխական կռիվը, երբ վոր կհաղթի բանվորութիւնը, այն ժամանակ կռիվներ չեն լինի։ Չի լինի նրա համար վոր կռիվները հնարում են հարուստները-բուրժուազիան։ Այն ժամանակ չի լինի և կարմիր բանակը։

Հարուստների իշխանութեան ժամանակ դպրոցներում սովորում եին միայն հարուստները, բանվորը և գիւղացին հնարա-

վորութիւն չունեին սովորելու, նրանք սրաղված էին հազար ու մի ցավերով, ժամանակ էլ չունեին դրա մասին մտածելու, դա ձեռնտու էր հարուստներին, նրան հարկավոր էր բանվորի ձեռքերը, գիւղացու մեջքը, դրա հետ միասին բանվորին ահագին ծախսեր էր հարկավոր կարգալու համար։ Խորհրդային իշխանութիւնը մի վորոշումով այդ բոլոր խոչընդոտները վերացրեց և մացրեց բանվորների և գիւղացիների համար պարտադիր և ձրի ուսում, ստեղծվեց աշխատանքի դպրոցը։ Բանվորներին և գիւղացիներին հանձնվեց տպարանները, տեխնիքական պիտույքները, գրադարանները, ուսումնարանի հարմար շինութիւնները և այլն։

Հարուստների իշխանութիւնը ուներ և մի միջոց՝ ժողովրդի ագիտութեան վրա հիմնված՝ աշխատավորների դեմ կռվելու. այդ եկեղեցին էր, վորը միանգամից հակառակ էր դասակարգային բաժանման և թշնամութիւն էր ծագեցնում միևնույն դասակարգի անդամների մեջ։ Դա բուրժուազիային շատ օգուտ էր՝ «բաժանիր և իշխիր», այդ էր նրանց ցանկութիւնը։

Խորհրդային իշխանութիւնը, չուզենալով խառնվել հավատի գործերում, ճանաչելով խղճի և հավատի լիակատար ազատութիւնը, եկեղեցին բաժանեց իշխանութիւնից, ազատ համարելով թե կրոնական և թե հակակրոնական պրոպագանդան։

(Վ. Ե Ր Ջ)

Ազգային գրադարան
NL0191721

ԳԻՆԸ 25 ԿՈՊԵԿ

Ստանալու համար դիմել Հ. Հ. Դիվիզիայի Քաղ-բաժնին